

Գր. Պախանջյան
ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԱԿԱՆ

ԱՍՍՈՒՐԱ-ԲԱԲԵԼԱԿԱՆ ԲԱՌԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հին Միջագետքի ժողովուրդներն էին սումերները (շումերները)¹ և
սեմիտները ի դեմս մասսորա-քաթեկացիների:

Սումերները քաղաքականորեն ավելի չուս են հանդես գալիս, դրա-
ված ունենալով Միջագետքի հարավային մասը՝ Բաբելոնից հարավ մինչև
Պարսից ծոցը: Ինչ չորրորդ հազարամյակում նրանք ստեղծել էին մի
շարք քաղաք-պետություններ իրենց իշխաններով (patesi, isak): Հյուսիս-
սային մասում հայտնի էին Կուտա, Գիշ և Սիպպար Ագադէ, իսկ հարա-
վում՝ Էրիդու, Ուր, Ուրուկ (= Էրեխ), Էլաասար, Նիպպուր, Արար, Իսին, Շիր-
ուրլա-Լալաշ, Շուրուպպուկ: Սումերների լեզուն կցական է, ունենալով
բազմաթիվ մասնիկների կցում բառի սկզբում և մանավանդ վերջում, և
աղգակցորեն չի նմանվում մի այլ որևէ լեզվի: Սումերները ստեղծողներն
են եղել մարգկային հնագույն կուլտուրայի, ի մեջ առյալ և գիրը (բեկոա-
գրություն):

Բսանությունը դարում սեմիտները (աակադացիք) հետզհետե նվա-
ճում են այդ սումերներին, ձուլում իրենց մեջ: Հարունակելով դարգացնել
քաղաքական և կուլտուրական կյանքը: Այդ հին բաբելոնյան շրջանն է
իրեն Սարգոնով, Նարամսինով, Նամուրապիով և այլն, որ տեևց մինչև
XVVI դարը, ևրը կասսինները նվաճում են Բաբելոնը, հետագայում ձուլ-
վելով տեղական այդ սեմիտների հետ: Սրանից հետո հզոր վերելք է սկս-
վում Բաբելոնից դեպի հյուսիս ընկած շրջանում՝ Ասորեստանում, որ տևում
է մոտավորապես XIII դարից մինչև 606 թիվը մեր էրայից առաջ, երբ
կործանվում է Նուեներա մայրաքաղաքը՝ Նինուէն: Այդ ժամանակից մինչև VI
դարի կեսը Միջագետքի սեմիտների կուլտուրան ապրում է մի կարճատև
ծաղկման շրջան ևս ի դեմս Նոր Բաբելոնիայի՝ Բաղդադի, որ 550 թվին
նվաճվում է պարսից արքա Կյուրոսի կողմից:

Բաբելոնի հնագույն թագավորները իրենց կոչում էին «Սումիրի և
Ակկադի (Ագադեի) թագավորներ», որով, ինչպես այժմ է դիտվում, նրանք
ցանկացել են շեշտել ոչ միայն սուվերենիտետի և քաղաքական հաջորդա-
կանություն հանգամանքները, այլև՝ ցեղային-էթնիկական տարբեր ու
այլալեզու միավորների գոյությունը: Այս հին Բաբելոնիայի, ինչպես և
հետագա Ասորեստանի ու Բաղդադի (սնոր Բաբելոնիայի) գրական լեզուն
այժմ միևնույնն է համարվում, չնչին տարբերությամբ ըստ դարաշրջան-

¹ Բաբելոնից այդ լեզուն առվանում էին lišān sumeri -լեզու, շումերա:

ների: Այդ լեզուն հայտնի է «աստուրա-բարեկական» անունով, թեպետ այժմ սկսվում է ավելի զործ ածվել «ակկադական» տերմինը, որը պահում ենք և մենք: Զորրորդ դարում արդեն ակկադերենը ժողովրդի մեջ փոխա-րինվել էր սիրիական (արամեական) լեզվով: Թեպետ տրադիցիոն ձևով շարունակվեց միայն մինչև մեր էրայի սկիզբը, գոնե մինչև Սելևկյան հարստության անկումը, որպես կրոնական և դիտական լեզու:

Հին Միջագետքի կուլտուրան և քաղաքակրթությունը ունեցավ իր ժա-մանակ միջազգային նշանակություն, հզորապես ազդելով մոտավոր և հե-ռավոր շատ ժողովուրդների վրա: Ակկադերենը դիվանագիտական լեզու էր թև եղիպտոսի, թե փոքր Ասիայի և թե էլամի թագավորների համար, գործածվելով մինչև իսկ մասնավոր գրագրությունների և վավերագրերի մեջ: Հոմեմասուր, օրինակ, Քյուլ-Քեփեի (Փոքր Ասիայում) ակկադական բազմաթիվ նման մանր գովումներն էր, գրված մեր էրայից քսան և եր-կու դար առաջ: Բարելոնի կուլտուրան փյունիկիական վաճառականության և զաղութների միջոցով տարածվեց դեպի հեռավոր արևմուտք, Միջերկրա-կան ծովի արևմտյան ափերը, ինչպես նաև փոքր Ասիայի վրայով դեպի էգեյան կղզիները և Հունաստան:

Բայց Միջագետքի այս հզոր կուլտուրան ազդեց բնականաբար և հյուսիսում գտնվող մի շարք ժողովուրդների վրա, նրանց պետական և հասարակական մի շարք կողմերի վրա, որ տեսնում ենք, օրինակ, խուրրի-միտանցիների մոտ, նախըրջան-ուրարտական ցեղերի մոտ և այլն: համեմա-տել հենց ուրարտական և խուրրիական քանդակները, արձանները (գլխո-ւող Ասուր, գլխավոր եգ...), տեխնիկան, ռազմական գործիքները (մարտականքերը և այլն), բևեռազրի գործածությունը, որ այդ նույն սեմիտներից է վերցվել և հարմարեցվել իրենց լեզուներին, և այլն և այլն: Լեզուները այս խնդրում, իհարկե, բացառություն չէին կարող կազմել: Օրի-նակ՝ հենց ուրարտերից, դատելով նրա պաշտոնական սակավաթիվ բնագրերից, մենք տեսնում ենք որոշ քանակի բառեր և մինչև իսկ ոճեր, որոնք զգվար թե միայն գրական ազդեցություն լինեն, որը չի բացասվում, իհարկե, ինչպես երկիրը կերպ, և թեպետ ինչ ճանապարհ ստեղծեց, և նույն-դր իմ առջևիցս էր գնում, աստվածները ինչ օգնություն են կան, և թեպետ-գավոր թագավորացի և այլն:

Հայաստանի հարավում եղած այս հին ժողովուրդները փոխանցել են հետագա հայերին թե շատ լեզվական մատերիալ, հատկապես բառեր, և թե որոշ քանակով ֆոլկլորական մուսկորներ — ավանդություններ, լե-զունդաներ, առասպելներ: Մենք չենք խոսում, իհարկե, այդ հին ժողովուրդ-ների կողմից փոխանցած այլ կուլտուրական ձեռքբերումների մասին, որով հայերը կարողացան դառնալ կուլտուրական մի ազգություն և ստեղ-ծել պետական կյանք: Հայաստանի այդ նախահայկական ժողովուրդները կամ անմիջապես են հայացել և կամ սյուրիայի (արամեացի) դարձել և հետո հայացել: և երբեմն շատ զգվար է ստել, թե սյու-ինչ լեզվական կամ ֆոլկ-լորական մեացուկը ինչ ծագումով է, ասորական (սիրիական) է, թե աս-սուրաբարեկական, եթե աքաթոդ անենք տեղական ծագումը: Ձե՞ որ որոշ բառաթերք կարող էր լինել թե սեմական և թե տեղական՝ սուրարյան (խուրրի-միտանյան), նախըրի-ուրարյան և մինչև իսկ խեթական, եթե ի նկատի առնենք, որ Մեկիտենում և Մոփբում գեո Vlll դարում իշխում

էին խեթերը իրենց Շահու ղինաստիայով (հմմտ. մեր «Մոփք Շահունաս», «Մոփք Շահէթ»):

Թողնելով աստուրա-բաբելական (սկկադական) լեզվից եկած հայ բառավորների քննությունը մի քիչ հետո, այստեղ ավելորդ չէր լինի նախապես մատնանշել և մի քանի ժողովրդական ավանդություններ կամ լեզունդաներ, որ նույնպես հայերին տնցել են հին Միջագետքի սեմիտներից, վիտյելով, հարկավ, հօգուտ հնագույն այդ կուլտուրական աղերսի:

Որինակ, բաբելական մի ավանդությունը հիշատակվում է Մասիս անունով սրբազան մի լեռ, որը պաշտպանվում է սրցանման ձևով ունեցող մարդկանցով, որովհետև այստեղից էր անցնում ճանապարհը դեպի «կյանքի ջրերը», կամ, ինչպես Բ. Տուրայեվն է ասում («Класс. Восток», 49-62)—Միջագետքից են գալիս այն լեզնիկները, որոնք նկարագրում են «путешествие к источнику живой воды через горы Масис, охраняемые людьми с руками-пилами, хождение через мрак, посещение чудесного сада у моря, вознесение на орле» և այլն: Հարց ենք առաջադրում. արդյոք մեր Մասիսը իր անունով ու սրբազան լինելով և նրա սուրբ ձակորի վանքը իր մոտի հայանի աղբյուրով չեն պահել սեմական այս ավանդությունները: Այս աղբյուրի ջրերը ժողովրդի մոտ սրբազանացվել են և պաշտվել, տարվում էին հեռավոր վայրեր, երաշտի դեմ միջոց էին համարվում, կապակցվում էին մորեխին ոչնչացնող «թթի դուշ» կոչված կարմրավերիկ սարյակների («մեռ»-երի) հետ: Ես դեռ թողնում եմ հունարեն ձուռնների կոչմից հիշատակվող նման սրբազան սարի անունը (mons Masius), որը հետագա «Տուր Արդինն» է: Հովհ. Թումանյանը հիշում է Մասիս լեռնանունը Հիմալայներում («Հիմալայան լեռներն էլ ունեն Մասիս անունը»):¹

Երկրորդ, մեր ժողովրդական վեպը, որ վերաբերում է Սանասար և Բաղդասարին, այս հերոսների անուններով ու ծննդյան հանգամանքներով ու տեղով նույնպես կապվում է Միջագետքի հետ, արտացոլելով պատմական այն փաստը, որ ասորեստանյան Սինախերիմ (— Սեննեբերիմ) թագավորի երկու որդիները սպանում են իրենց հորը և փախչում Ուրարտու, ապավինելով վերջինիս օգնություն: Այս փաստը մեզ հայտնի է թև ասուրական բեռագիր արձանագրություններից և թև Աստվածաշնչից: Սեննեբերիմի որդիների անունները (Նարեսար և Ադրամելեխ) հայերը իրենց վեպում փոխել են, մեկը դարձնելով ասուրական ամենատարածված Salmnasar թագավորանվան մի ձևափոխությունը՝ Սանասար (կարդացել եմ և «Սաղասար», որ ավելի մոտ է Salmnasar-ին), իսկ մյուսը բառահարմարանքի տեսակետից դարձրել են Valtasar, այսինքն՝ Բաղդասար, որ Բաբելոնի նախավերջին թագավորն էր:

Երրորդ, մեր «Արա-Շամիրում» առասպելի մեջ ևս կա Միջագետքի որոշ ազդեցությունը, թե մասամբ սյուժեի տեսակետից և թև մանավանդ Շամիրում անունով, որը արտացոլում է Իշտարին, այսինքն՝ մեռնող ու հորություն առնող Թամուզի սիրուհուն:

Վերջապես, Հայկի ու Բեկի առասպելը նույնպես կապվում է այս Միջագետքի հետ, արտացոլելով նախորդ առասպելների ու վեպի հետ զարավոր

¹ Տես նաև զբախտականում Հ. Անտոյանի «Գաղ. բառարանի» մասին («Թումանյանը— քննադատ», Երևան, 1936 թ., էջ 430):

պայքարը ու բարտացիների ու հարավային այդ սեմիտների միջև. հայերը այդ ավանդավիպերով անշուշտ մատնանշում են, որ իրենք ուրարտական ժողովուրդների ժառանգորդներն են, պահելով որոշ տրադիցիա և այդ ժողովուրդների պայքարն ու կուլտուրան իրենցը համարելով՝ «Բնյ» անունը, որ սեմական բառ է և նշանակում է «տէր», հետագայում հատկացվելով Մարդուկ աստծուն, իր արտաքինով նույնպես վկայում է բարեկական առաջուրը և ոչ թե սիրիական-արամեական, փյունիկյան կամ հին հրեական նման բառը՝ Համեմատել ակկ. belu «տէր» (Herr), «իշխել, տիրել» (beherrschen), որից belutu «տիրապետություն» (Herrschaft, անս B. Meissner, Die Keilschrift. 1922, էջ 103),¹ այնինչ մյուս սեմականներում նույնի է ba'al (= տէր), Իսկարժիթով՝ ակկադական այդ bel-ը հայերի միջոցով անցել է և վրացիներին, ուր bel-aid-ը նշանակում է «ղեկավար» (բայт Чы-бунд-ի 1887 թվի բառարանի՝ վրաց. beladi նշանակում է „вожак, вожа-тиня; наездник“, անս նրա մաս, էջ 104)։

Կա մինչև իսկ կրոնական բնույթ ունեցող մի լեզվաբան, որը բայտ 'Ի. Քալաթյանի՝ ասորիների միջոցով, որպես սեմական մի վարիանտ, անցել է հայերին այդ նույն Միջագետքից և վերաբերում է կնոջ (— քրմուհու, resp. երեցկնոջ) ձուկ դառնալուն անմեղ սիրտ պատճառով։

Այս և նման բոլոր ավանդությունները զույգ են տալիս, թե որքան հզոր է եղել հին Միջագետքի այդ կուլտուրական դերը—ազդեցությունը իր հարևան ժողովուրդների վրա, որոնց միջոցով և հետագա հայերի վրա։ Այժմ քննենք ժանրամասերին, թե այդ ու անմիջական ճանապարհով որքան բառեր են մտել հայոց լեզուն ակկադերենից.—մի հանգամանք, որ կրկին անգամ վկայում է հոգուտ այդ սեմիտների հզոր կուլտուրայի։

Չի կարելի բացառել, իհարկե, և այնպիսի զեպքեր, երբ հայերենում առկա են բառեր, որ սուսերական արտաքին ունեն, բայց ակկադական տեքստերում չենք գտնում։ Այս, իհարկե, չի նշանակում, որ այդ սուսերական հատ ու կենտ բառերը չեն եղել ասուրա-բարելական լեզվում, որովհետև հայերը այլ կերպ չէին կարող վերցնել ակկադերենում սուսերական ծագումով պահպանվել են, օրինակ, հետևյալ բառերը—1) sukkallu «լրատար, ղեկավար» (Vertreter), 2) dirigu «առեկաց» ամբը (5 օր տարվա վերջը), 3) igisu «հարկ, տուրք», 4) ekallu «պալատ, ապարանք» (= սուս. egal), 5) kussu «գահ» (= սուս. guza),² 6) musarū «ածու, մարգ», որ, բայտ իս, ասորիների միջոցով մտել է հարավային ռայ բարբառները (Դիլի, Մաշկերտ, Այնթապ)՝ «մաշարայ» ձևով, ուր նշանակում է «պարտեզներում շինած փոքրիկ ածուներ միատեսակ բույսերով» (տես Հ. Ա. Նառյան, Իսլամական բառարան, էջ 753), 7) passûru «պնակ, սեղան» (= սուս. banşur), 8) adaguru «ծխանոթ» (Rauchergefass), 9) palû «կառավարում, կառավարություն», որի հետ ևս համեմատում եմ վրաց uphalt «թագավոր» և հունարեն βαλέν «թագավոր», 10) duppu «աղյուսից տախտակ, արձանագրություն, դրուկ»

¹ A. Ungnad-ը իր „Babylonisch-assyrische Grammatik“-ում (München, 1906, էջ 141) belu թարգմանում է „Herr, Besitzer, General“, իսկ b'l բառարմատը՝ bezwungen, unterwerfen, beherrschen.

² Այս բառը անցել է նաև եբրայեցիներին Kisse ձևով և նշանակում է «գահ, բազմական» (трон, седилище), արամայեցիներին karše կամ kurše ձևով (id.); Այս վերջին ձևից է անշուշտ մեր և թուրք. khursi «փոքր բառակուսի թախտ, որ ձմեռը ծածկում են կարգեամբ, ամուրի դնում առկը և ոտները տաքացնում»։

մենտ» (= սուժ. dub «տախտակ», որից dubzar «տախտակ գրող»), 11) dim-gallu «արխիտեկտոր» և այլն և այլն: Սուժերական այսպիսի բառեր կարող էին ինարկե մտնել և նախահայկական հարավային լեզուները, այն էլ ակկադերենի միջնորդությամբ (via accadica). Քեպես կարող էր փոխանցվել և էլամիտների ու ասորիների միջոցով: Սուժերական ծագումով են հավանորեն աբադիլ, լոխ—դոխազ, կաշի, սղի և մի քանի այլ բառեր: որոնց մասին կիսովի վերջում:

Այս բոլոր նկատառումներով չի կարելի մեր կարծիքով, հետազոտական այս մեր էքսկուրսը անվանել «Ակկադերենի ազդեցությունը հայերենի վրա» (թող թե «Սուժերենի ազդեցությունը հայերենի վրա»), որովհետև հայերի գոյացման ժամանակ դրանք դադարել էին խոսել իրենց լեզվով, այլապես էին դարձել և հայերի հետ անմիջապես հարեան չէին: Այդ տեսակետից ճիշտ կլինի խոսել ընդհանրապես հայերենի ակկադական բառերի մասին:

Հայերենի ակկադական բառերը առանձնացրել է իր «Հայոց լեզվի պատմություն» մեջ նաև Հ. Աճառյանը, հավաքելով այդտեղ և իր «Արմատական բառարանում» այն ամենը, ինչ տարրեր ժամանակներում ստուգաբանվել է այս կամ այն գիտնականի կողմից, ավելացնելով ինարկե և իրեն: Այս բոլորը չի տնցնում 20—25 բառից: Հայտնի հայագետ Հյուբերմանը իր Armenische Grammatik-ում այդ հայ-ակկադական ընդհանուր բառերը դրել է ստորական (սիրիական) լեզվից փոխառյալ բառերի շարքում, թեպետ տեղ-տեղ ընդգծում է աստուրական կամ մինչև իսկ սուժերական ծագումը: Անշուշտ այս աստուրա-բարեկական (resp. սուժերական) բառերը պիտի առանձնացվեն մի խմբակի մեջ, ինչպես արել է և Հ. Աճառյանը, թեպետ փոխանցող ժողովուրդները եղել են տարրեր լեզուների կամ բարբառների և նշյալնաբանորեն էլ տարրեր փոփոխման են ենթարկել:

Մենք այստեղ նախ կրենենք այն բոլոր բառերը, որ հայերենում փոխառյալ են համարվում աստուրա-բարեկականից, այսինքն՝ ակկադերենից, օգտվելով Հ. Աճառյանի հավաքածուից: Սրանից նետո, նմանապես այրուրենական կարգով, կավելացնենք և այն ստուգաբանությունները, որ տվել են որոշ գիտնականներ և որ ստույգ պիտի համարել, ինչպես նաև այն մոտերեք տասնյակ նոր համեմատությունները, որ առաջին անգամն է ներկայացրել մեր կողմից: Միասին բոլորը կկազմեն մոտ վեց տասնյակ ակկադական փոխառություններ հայերենում: Դերցնենք ուրեմն Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» մեջ բերված հայ-ակկադական ընդհանուր բառերը, որոնց մի մասը իրեն ստուգաբանություն է (տես նրա «Հայոց լեզ. պատմ.», I մաս, Երևան, 1940 թ., էջեր 194—201):

1) Անազ «կրեկ» = չին սուժ. anaz, ասուր. {ակկ.} anaku: Այս ճիշտ համեմատությունը առաջին անգամ արել են Բասմաջյանը և Սազըզյանը (տես «Արմ. բառ.», I, էջ 276):

2) Բերդ = ակկ. birtu, որ անցել է նաև հրեայեցիներին և արամայեցիներին: Այս ճիշտ ստուգաբանությունը առաջարկվել է Ի. Ուլաթյանի և Karst-ի կողմից (Արմ. բառ., I, 1971): Իմ կարծիքով՝ բերդ բառի ծագումը սեմական չէ, մանավանդ որ դրա արմատը այդտեղ չի էլ բացատրվում, այլ հին փոքրասիական: Այս մասին տես մասամբ իմ «Общие элементы между халдским и хеттским языками» (էջ 49): Այդ սեմական-հայկական

hirtl || berd ձևը, բայտ իս, հնում եղել է bitr կամ betr և պիտի կապակցել հին փոքր Ասիայում շատ տարածված նման հասարակ և հատուկ անվան հետ: Նախ ուրարտերենում կա patar, որ նշանակում է քաղաք¹, իսկ սկզբում հավանորեն պարսպապատ, որից հետո չէ քերդ² նոր նշանակա-
թյունը: Ճիշտ էր վարվում նախ Լեհման Հաուպտը, երբ ուրարտական այդ բառը տեսնում էր մի քանի քաղաքանունների մեջ, որոնք հնչվել են Patara, Patera (Լյուկիայում, Լիկանոնիայում. Բաալբիա-Կիլիկիայում) և նմանները: Նմանապես չէր սխալվել S. Bugge-ն, երբ իր „I.yk. Studien“ (1,37) գրքում առաջարկել էր մեր հայոց berd բառը տեսնել Լիկանոնիայի Perta տեղանվան մեջ: Սրանց մեր կողմից կավելացնենք կլասիկ դրոդ-ների Phitar կամ Pilar բերդանունը: Դոմիթում („in terra Sophentorum“, „e regione Soplenorum“, տես H. Adonci, Арм. в эп. Юст., 31), որը իմ կարծիքով, համընկնում է Ասորեստանի թագավոր Ասսուերնազիրբալի ար-
ձանագրություններում հիշվող Pitura բերդաքաղաքին: Կար և Petra անու-
նով բերդ Արարիայում և Լադիկայում բյուզանդական ժամանակաշրջանում (ibid.): Այս բոլորի վրա կավելացնելի և ուրարտական արձանագրություն-
ներում հիշատակվող երկու նվաճված քաղաքների bitarna վերջամասը, որը անշուշտ քերդ³ է նշանակել: Սրանցից մեկն է Kulbitarrini, որ հիշվում է Սարգուրի մի արձանագրության մեջ (եթզդյուրիա արձ., տող 30) և տե-
ղով ու անունով համընկնում է հայոց Վազքերիդ-ին, իսկ մյուսն է Uzi-
nabitarna նույն Սարգուրի մի այլ արձանագրության մեջ (Վանի նիշայի քարակոթողի վրա), որը Բասմեի կողմերում էր և եթե հայացնենք, ապա կհնչվեր *Վձնաբերդ: Այս բոլոր վկայությունները ցույց են տալիս, որ հին փոքրասիական, ուրարտական և այլ բառերը, որոնք հնչվել են patar || pitar || bitar(n) || petra || perta և այլն, պահել են մեր բերդ և սեմական hirt բառերի սկզբնական ձևերը: Patar կամ pitar սկզբնաձևը թերևս ածանցա-
վոր լինի, կաղմած pat- (had-) կամ pit- (hid-) արմատից պատկեր իմաստով և -ar վերջամասնիկով: Համեմատել սուսերական had կամ hat պարիոդ, սոսուր. (ակկ.) pa(u) սասման, շրջան, որոնք համապատասխանում են, ըստ Սալրդյանի և Karst-ի, մեր «աստ» արմատին (տես Արմ. բառ., V, էջ 874): Բայց այս «աստեր» արմատն ու նշանակությունը կա և խեթերենում, ուր կա pittula կամ pattula „сверток пряжи“ (— մեր վավառական «փա-
թույն»), pataliandu «թուղ գրադեցնեն» (= մեր պատաղիմ = գրադվում եմ): 3) Բառ «ծեփելու կիր կամ գան» բարել.*bulu, առուր. pūlu «կիր», որից փոխառյալ է նաև հունար. poros «տուֆ, փխրաքար» (տես Հ. Աճա-
ռյանի մոտ, «Հայոց լեզ. պատմ.» և Արմ. բառ., I, էջ 1206), թեպետ այս ստուգաբանությունը առաջին անգամ առաջարկել է Jansen-ը (Hitt. u. Arm., էջ 183, 212. Հանդ. ամս., 1904 թ., էջ 273), ինչպես որ մատնանշվում է Հ. Աճառյանի մոտ (Արմ. բառ.): Իմ կարծիքով այս համեմատությունը որոշ առարկություն է վերցնում: Նախ, ակկ. pulu ձևը (երբ քաղաձայնով)

¹ Խեթական Դուրշիլ II թագավորի մի արձանագրության մեջ, որ խոսում է Bar-
ga և Kargamis երկրների նվաճման մասին, մի տեղ կարգում ենք. «Գարուվատա քաղա-
քը. ta-an-na-ta-an bu-ru-ul... բեզ, Արիմարդայից, կամ (տես Հրոզնու հրատ., Bogh. St. III, էջ 140): Այդ երկու բառերը ակկադական են, որոնցից մեկը dattu, իզակ սոնի datti-
nati նշանակում է ամուր, չորս և ամբողջուն, իսկ bu-ru-ul-ը, որ նման է ակկադ. bu-
ru-ին, ձևով ինչ անհասկանալի է:

շատ հին է, այդպես հնչվելով դեռ XII դարում, զոնե՝ Թիդլաթփիլիսեր 1-ի մամանակ, և հետևապես հայերենում սպասելի էր պուլեզ կամ *փուլեզ, երկրորդ ակնագերհն բառի «կրաքար» կիրք իմաստը այնքան էլ չի ճշտվում, այլ այդ pulu կամ pilu նշանակել է քառակուսաձև քար, փմաքար» («Quadergestein, Felsgestein», տես A. Ungnad-ի մոտ, էջ 153): Հիշենք, որ ուրարտական Սարգուր 1-ը, Լուտիբրիի որդին, երբ շինում էր Վանի հին բերդը («Sardurburg»-ը ըստ Լեհման Հաուպտի), ապա այդ pulu-ները բերել է տալիս Անիունու քաղաքից¹։ այդ քարերը մինչև հիմա էլ մնում են, ունեն մարդու հասակի մեծություն, տաշված են, քառակուսաձև և ունեն արձանագրություն, որ երբեք տուֆ քարի վրա չի գրվել։ Այս ակնադական pul- արմատից է ուրարտական pulusi քառակոթող, սահլա», որի վրա արձանագրություններ էին գրում։ Ն. Մառը, որ առաջինը շեշտեց այդ կապակցությունը, մինչև իսկ սեմական pulu (pilu) բառը ցանկանում էր «հարեթական» համարել, ի նկատի ունենալով՝ թե այդ ուրարտական pulu- ին և թե մանավանդ վրաց phili «սանդաքար», որ սկզբում կարող էր նշանակել ընդհանրապես քար, քարասալ» (камень, каменная плита, տես նրա «Материалы по халдской эпиграфике», Петроград, 1917 թ. էջ 9—13): Ն. Մառը, օգտվելով W. Loitz-ի գրքից (Inscriften Tiglathpileser's I, VI, 84, էջ 60), ասուրական բառը թարգմանել է՝ «плита, каменная глыба» (ibid., էջ 12, ծանոթ. 2), շեշտելով, որ pulu ձևը հին է, դործ է ածվել դեռ այդ թագավորի ժամանակ։ Այս բոլոր նկատառումներով ինձ թվում է, որ հայոց բուն բառը չպիտի կապակցել ակնադական pulu կամ pilu բառի հետ, ոչ հնչյունական տեսակետից և ոչ էլ իմաստաբանական։

4) Դիզաթնի մարդու և լեռան գաղաթ ըստ ճիշտ ստուգաբանության՝ Խալաթյանի, հետո Jensen-ի, Karst-ի (տես «Արմ. բառ.», II, էջ 4) = բարի, gagadu (gaggadu), ասուր. kakkadu, սուսեր. gaggud «գլուխ»։ Բերկոզից այժմ ավելացնենք, որ ասուրա-բաբելոնական ընդհանուր ձևը հաստատվում է kakkadu թե ըստ B. Meissner-ի («Die Keilschrift», Leipzig, 1922, էջ 110—kakkadu «Haupt») և թե ըստ A. Ungnad-ի («Babyl.-ass. Grammi.», München, 1906, էջ 145—kakkadu «Kopf»):

5) Թոգիթ բառի մասին Հ. Աճառյանը ասում է. «Ամբողջ Արևելքում տարածված բառ է, բոլորի մայրն է սեմականը, որից անցել է իրանցիներին և այնտեղից էլ թուրքական ժողովուրդներին» (տես նրա «Հայ. լեզ. պատմ.», էջ 196)։ Եվ որովհետև ոչ մի լեզվի ձևը չի համընկնում հայերենին, իսկ թոնիրն էլ դեռ շատ հնում դործ է ածվել հայերի մոտ, ուստի նա հարմար է գտնում հայերեն ձևը սերել ասուրական tinuru-ից, որը խալդեերին վրայով անցած պիտի լինի և հայերին։ Հյուսիսում այս բառը (թոնիր) համարում էր իրաներենի միջոցով փոխ առնված, համեմատելով ավեստական tanura, պահլ. tanur, նոր պարսկ. tanur բառերի հետ, թեպետ նման ձևեր են և երբ. tannūr, արամեական-սիրիական tannūrā, արաբ. tan-nur (տես նրա Arm. Grammi., էջ 155)։

6) Խուլց. «փոքր սենյակ» ըստ Հ. Աճառյանի ստուգաբանության («Հայ. լեզ. պատմ.», 196) = ասուր. xussu «ցանկապատ, շենքի հավելվածական

¹ Սարգուրի այս արձանագրությունը, որ ասուրական լեզվով է, այս տեղում ասում է. «anaku pulani annute ištu libbi URU Alniunu naxaku, anaku dur annišani artisip» — և քարերը այս ի միջև քաղաքի Անիունու փոխադրեցի, ևս բերդ (բուրդ) այստեղ կառուցեցի։

մասն, որը նախապես նշանակել է «եղեգ», իսկ հետո՝ դրանից շինած անակ, խոճիթ, հյուղակ:

7) Կիր («известь») ըստ Հ. Աճառյանի աստուրական փոխառություն է, որը թեպետ այդ լեզվում չի պահպանվում, բայց պիտի լինեն և հնչվեն *gīr, ի նկատի ունենալով երբ. gīr, արամ. gīr, արար. jīr (<*gīr), սաբ. girm «կիր» եթով. gayar «ծեփել», քրիստ. պաղեստ. mgīrīn «ծեփեալ» (Արմ. բառ., III, 1206): Հայերից այդ բառը անցել է վրացիներին, օսերին, լազերին, չեչեններին, ինգուշներին և այլն (ibid., 1207): Հյուսիսում հայոց այս կիր բառը կցում էր օսական, վրացական և թուրքական (kirej) ձևերին, ինչպես դրանք միասին և սեմականներին (արամ. gīr «kalk», արար. jīr և այլն), ենթադրելով, որ այդ բառը հայերին անցել է պարսկերենից (Arm. Gramm. էջ 172):

8) Կզզի («озор») բառը դեռ 1908 թվին Ն. Մառը առաջարկեց վրաց kundzuli նույնիմաստ բառի հետ, կաղծված հարեթական kzt արմատից, համեմատել սեմական ազգակից gzt նույնիմաստ արմատի հետ: Այս վերջինը կա արար. jazīra, ասոր. gzīr-ta («կզզի») բառերի մեջ (տես նաև Оси. табл. к грам. др. грыз. язика, էջ 9): Հ. Աճառյանը թեպետ բերում է Ն. Մառի այս տեսակետը (Արմ. բառ., II, 1236), այն էլ ոչ սկզբում, բայց առաջարկում է հայոց կզզի բառը համարել աստուրականից փոխառյալ, ուր թեպետ նման բառ չի պահպանվում, բայց դրա գոյությունը ենթադրվում է, ի նկատի ունենալով աստուրական և արաբական բառերը (ասոր. gazar-ta, արար. jazar, jazīra), որոնցից հայերին ձևը անմիջական փոխառություն չէր կարող լինել (տես «Հայ. լեզ. պատմ.», էջ 196): Սեմական լեզուները տալիս են ընդհանուր gzt արմատը, որը փոխվելով gīz՝ սա էլ gīz, վերջում տալիս են հայոց klz-i (կզզի): Սեմական (աստուրական) ցրտաձայնը հայերենում դառնում է խուլ (k), ինչպես այդ տեղի է ունենում այլ դեպքերում:

9) Կմախք = աստուր. gimaxxu, kimaxxu, qimaxxu «ղաղաղ», սումեր. kimax «գերեզման», ինչպես առաջին անգամ ստուգաբանել են Brockelmann-ը և Autran-ը (Արմ. բառ., III, 1242—1243): Կա և բայ՝ կմախք «կարթաճարել կամ ջլառել»: Բայց կա և կմախք «մեռելի սղահանդես, մեռելի վրա եղած ողբ ու կոծը», որը Հ. Աճառյանը միացնում է վերոհիշյալ սումերա-ակկադական ձևերին, իմաստի տեսակետից համարելով միջինը: Այս բառերին է նա կցում և հայոց Կմախք քաղաքի անունը, ի նկատի առնելով, որ դա հայ Արշակունիների գերեզմանոցն էր Անի ամրոցի դիմաց (Եփրատի վրա) Դարանաղյաց գավառում: Ըստ իս քաղաքի անունը կարող էր ձևափոխված լինել և հին Komag-enē անունից, որպիսին կրել են հին Փոքր Ասիայում մի քանի քաղաքներ, իսկ ծագումը կարող է լինել և տեղական: Ն. Մառը հայոց կմախք բառը կցում էր աստուրական gmx «ողորներ» բառին, որը անշուշտ իմաստով ավելի մոտ է հայերեն փոխառությանը, իսկ Brockelmann-ը (Lex. syr., 57) հիշում է նաև «bel gamaxa» «մահարձան, շիրիմ» (տառացի՝ տուն ոսկորների): Եւ Ն. Աճառյանի մոտ (Արմ. բառ., III, 1243):

10) Կնիք («печать») = աստուր. kunakku «կնիք», ակկադ. qanaqu «կնքել» (ըստ ճիշտ մեկնություն Bugge-ի, Hubschmann-ի և այլն. տես Արմ. բառ., III, 1252—1253): Հայերից այս բառը անցել է թուրքական, ուզբեկական և

կան և սլավական լեզուները: Ռուսաց книга բառը, ինչպես ձիշտ նշել են Mikkola, Pedersen, Munkasci և ընդունվել է Berneker-ի կողմից (տե՛ս նրա Արմ. բառարանը, էջ 664): Նույնպես ծագում է այս մեր «կնիք» բառից: Ն. Մառը, որ նույնպես տվել է այս ստուգաբանությունը, իմաստական զարգացման տեսակետից բերում է նման փոխաբաբերություն ի դեմս լատին. signum (= նշան) և այստեղից վրաց cigni (– գիրք) բառերի:

11) Կիթո = ասուեր. gisrinnu բլծակ, կշիռք, սոււմեր. gusur, gusra «ձող, լծակ» (ըստ Karst-ի մեկնության, տե՛ս Հ. Աճ. Արմ. բառ., III, 1260–1261):

12) Կոզոն = եուդտի ձագ, որին մոտ է և կոզնե սանջափանա երեխա, մանուկ», որպես փոխաբերություն: Կա և դավառական (Ղարարագում) գյոզուակ «ուդտի ձագ» Հ. Աճառյանը իր «Արմ. բառարանում» (III, 1269–1270) համեմատելով այս ձևերը արար jazur (< gazar) նույնիմաստ բառի հետ, սկիզբը դնում է ասուեր. xzr արմատը, որտեղից էլ միջնորդապես այդ բառը անցած պիտի լինի հայերին: Ուդտը հնում չի եղել Հայաստանի կենդանի, ուրեմն եուդտի և գլոզնա (գլոզուակ) անուններն էլ զրաից պիտի ղային: Ասորեստանում անգամ ուդտը հիշատակվում է, որպես զրաից բերված կենդանի, Թիգլաթպիլեսեր I-ի ժամանակ (1108–1080), բերված լինելով Hindan քաղաքից, Guzan կամ Gulzan երկրից, Mesu երկրից, Մաբասանից: Ասորեստանից էլ այդ կենդանին և բառը մտել են Ուրարտու և ուրեմն հայերին: Ուրարտական թագավոր Սրգիշտի I-ի մի արձանագրության մեջ (Ղանի ժայռի վրա, IV սյունակ, տող 6) ուդտը հիշվում է ավարառու կենդանիների մեջ, վերցված Ասորեստանից (ANŠU ul-tu-ni mes = ուդտեր), իսկ Ռուսա I թագավորը արդեն բազմացնել է տալիս այդ կենդանին իր երկրում: Պետք է ընդգծել սակայն, որ բաբելական լեզվում կար և gammalu եուդտը բառը (որից լատ. camelus, վրաց akhleml), bakkaru եուդտի ձագ («Kamelstullen», anaktu «էգ ուխտ» (Kamelstute, տե՛ս A. Ungnad-ի մոտ): Անդուշտ վրաց bokveri «առյուծի (արջի...) ձագ» բառը այս ակն. bakkar- բնիցն է, ենթարկվելով իմաստափոխության:

13) Հալաթ = զգեստ», ըստ Հ. Աճառյանի ասուեր. xalapu «ծածկել», naxlapu «կերպաս, հագուստ, զգեստ» (Արմ. բառ., IV, 25 և «Հայոց լեզուագրություն», 198):

14) Մալլաթ = հաստ չվան», ըստ Հ. Աճառյանի ասուեր. maxullanu նույն նշանակությամբ («Հայ. լեզ. պատմ.», 198):

15) Մալխազ կամ մալխալ թագավորի պահապանների գլխավոր» ըստ Ն. Աղոնցի («Արմ. Ե ՅՍ. 10 Oct.», 400) – ասուեր. malxazu «խշխան» (տե՛ս նաև Արմ. բառ., IV, 272): Այս բառից է Ն. Աղոնցը հանում հայ Մաղխազունի նախարարության նոր հորջորջումը, քանի որ զրանք իրոք Խոխոսոռունիներն են (այս անունը, ըստ իս. xurri = խոռ ցեղանունից է): Իսկ սեմական արմատը malxaz-ի համար նշվել է mlk (= mlkh «մլք»), որ նշանակել է «հնարամտեր» (ersinnen), որից ակկադ. milku «խորհուրդ» (Rat), maliku «խորհրդատու» (Ratgeber), malku «խիւան» (տե՛ս A. Ungnad-ի մոտ, էջ 149):

16) Մախառ ըստ Բ. Խալաթյանցի = ասուեր. maxaru «դեմ կանգնել, հակառակել, մրցել, թշնամու դեմ դուրս գալ» (տե՛ս Արմ. բառ., IV, 240 և «Հայ. լեզ. պատմ.», 198): Բայց այս ստուգաբանությունը, որ ընդունել է և Հ. Աճառյանը, ըստ իս. որոշ առարկություններ է վերցնում: Նախ, հա-

յերենում սպասելի էր ավելի շուտ «մտխարել» և ոչ թե մաքառել, որ շատերը ուզում են կապակցել հուն. makh «կոխիվ, կոպել» արմատի հետ (տես Արմ. բառ., ibid.). և երկրորդ, ակկադերենում mxr բայարմատը նշանակել է «ընկալել, ընդդիմանալ» (empfangen; Widerstand geleistet werden; abgelehrt werden), ինչպես տալիս են B. Meissner-ը («Die Keilschrift», էջ 107) և A. Ungnad-ը («Bab.-ass. Gr.», էջ 148—149), որոնց նախնական իմաստն է «դեմը, առաջը» (maxar), «ընդդեմ» (mixrit):

17) Մզիլ ըստ Հ. Աճառյանի = ասուր. mazu «մզիլ, քամել» (զինի և այլն), Տես նրա «Հայոց լեզ. պատմ.» (էջ 198):

18) Նահանգ ըստ Բ. Քարսթյանցի և Karst-ի = ասուր. na-an-ga «երկրամաս, երկրի շրջանակ, երկիր, վայր» (Արմ. բառ., V, 25—26, «Հայ. լեզ. պատմ.», 198): Այս ստուգաբանությունը, որ ընդունում է նաև Հ. Աճառյանը (ibid.), որոշ առարկություն է վերցնում, նախ, ասուր. nanga հնչումը դժվար թե դառնար «նահանգ», ընդունելով «ha» հնչյունական հավելումը. երկրորդ, անտես չի կարելի առնել արաբ. nahla (գավառակ) բառը, թող թե նախ-ապիտ, ևսի-արար փոխառությունների այդ սկզբնական մասը (նախարար < nahazār-ից). և երրորդ, ակկադերենում բառը հնչվել է nagu «Bezirk, Provinz» (տես A. Ungnad-ի մոտ, էջ 151):

19) Ուզտ = ասուր. uldu (ըստ Հ. Աճ. «Հայ. լեզ. պատմ.», 198), թեպետ «Արմ. բառ.»-ում տրված է ասուր. uḍru կամ uḍuru ձևը (V, 635), որին նման են սանսկր. և հին իրան. (ավեստ.) uštra, նոր պարսկ. uštur բառաձևերը: Ինչ հայտնի չէ ասուր. uldu ձևը, որը, իհարկե, շատ մոտ է ուրարտական ulūni ձևին, որ հիշվում է Արգիշտիի արձանագրության մեջ (տես վերը): Երեքի uštra > ակկ. *ustur > uturu || udur-u > urd-u > uld-u:

20) Ուրազ «փայտ տաշելու գործիք», ըստ Հ. Աճառյանի = ասուր. urraku «քարտաշ» («Հայ. լեզ. պատմ.», 198), թեպետ հայերենում ևս կապասեի *ուռաջ, թող թե իմաստների տարբերությունը:

21) Տամալ կամ տամալի «տանիք, երգիք, տան վրա ճեմելիք» ըստ Հ. Աճառյանի ստուգաբանության = ասուր. tamlu կամ tamliu «պատշգամբ» («Հայ. լեզ. պ.», 198): A. Ungnad-ը ակկադական այս բառը թարգմանում է «հողաթումբ» (насыпь), տերրաս («բատոց»): տես նրա Bab.-ass. Gr., էջ 162 (tamlu — Aufschüttung, Terrasse):

22) Տարածել ըստ Հ. Աճառյանի = ասուր. tarāšu «շինել, մեկնել, տարածել» («Հայ. լեզ. պ.», 198), թեպետ հայերենում ևս կապասեի ավելի շուտ *թարածել կամ *թարացել ակկադերենում trs բայարմատը իրոք նշանակել է «ուղղել» (richten, ըստ A. Ungnad-ի, էջ 162), tarsu «ուղղում, ժամանակ» (ibid.): Բայց հետազոտող չէ՞ր արդյոք, ինչպես շատերն են շեշտել (տես «Արմ. բառ.»), հայոց «տարածել» բայը հասկանալ տարածել, ինչպես ունենք տարածամիմ, տարուբերիմ, տարապարտուց և այլն:

23) Ցեց ըստ Հ. Աճառյանի («Հայ. լեզ. պ.», 198) = ասուր. sasū (id.): Այս ստուգաբանությունը ունի հնչյունաբանական արդարացում (ասուր. s = հայոց «ց», այն ինչ առաջ «ցեց»-ի հետ համեմատում էին հուն. seS, եբբ. sas, պարսկ. sas, ասոր. sasa և այլն, որ իրավամբ մերժում էր Հյուբշտանը (Arm. Gr., 317):

24) Փախ, փախել, փախսիլ և այլն ըստ Jensen-ի, Karst-ի և Peder sen-ի = ասուր. puḫxu «փոխել, փոխանակել», puḫu «փոխանակություն»:

փոխառություն, փոխառություն, ընկալադիր, ստացական» (Արմ. բառ., VI, 1253 և «Հայ. լեզ. պ.» 198)։

25) Գեղարք ըստ Հ. Աճառյանի — ասուր. kalakku «պարթսպ, շրջապարթսպ, դարավանդ» («Հայ. լեզ. պ.» 198)։

* * *

Բացի այս մոտ քսան և հինգ ակկադական բառերից հայերենում կան նույն ծագմամբ և այլ բառեր, որոնք, որինակ, անցել են պարսիկներին, կամ հույներին, կամ ասորիներին, և ձեռագրվելով սրանցից անցել են և հայերին։ Հ. Աճառյանը մատնանշում է, որինակ, մեր դարի բառը, որի արմատը գալիս է սուսեր. dub, էլամ. tuppi և ակկադ. duppu «դրության տախտակ» ձևից, բայց հին պարսկերենում դառնալով dīrī, իսկ սրանից էլ dīr «քարտուղար, գրագիր»։ անցել է նաև հայերին, համ, որինակ, ասուր. zabbīlu «մի բան տանելու աման», անցնելով պարսիկներին zānbil ձևով, փոխանցվել է և հայերին «զամբիլ» ձևով։ Հույների միջոցով մեզ անցել են սուսեր. nēru «600» (>հույն. nēros>հայոց ներ), սուս. sus «60», ակկ. šuššu «60» >հույն. sōssos>հայոց սոս («վաթսուս տարվա մի շրջան»)։ Բայց, որինակ, բաբել. (ակկ.) šar «3600», որ անցել է ասորիներին (sar), հույներին (saros), լատիներին (sarus «3600 տարվա շրջան»)։ հայերին չի անցել այդ լեզուների միջոցով, որով կատարվել հայերենում «սար», այլ ունի՝ «շար», որ իր է բաղաձայնով անմիջապես է մոտենում ասուրա-քուրդական šar-ին։ Այս պատճառով էլ, ինչպես ճիշտ գիտում է Հ. Աճառյանը, հայոց այդ «շար»-ը Սիլվադետից անցած պիտի լիներ Հայաստանի նախաբնիկներին (խալդերին և այլն), որոնցից և հայերին։

Բայց, արդյոք, այս մոտ քսան և հինգ բառով սպառվում է ակկադերենի աղագրությունը հայերենի վրա։ Ինչ թվում է, որ ոչ, կան դեռ երեք տասնյակից ավելի բառեր, որոնք մտել են հայերենը այդ նույն Սիլվադետից և մինչև իսկ սուսերենից, թեպետ և վերջինիս բառերը չեն գտնված ակկադերենում։ Այս նոր ստուգաբանությունները կատարվել են գլխավորապես իմ կողմից. իսկ ուրիշների կողմից տրված մի քանի համեմատություններն էլ ճշտվում են կամ ավելի հաստատվում ու լրացվում։ Թվենք մի առավել այդ մոտ 35 նոր ստուգաբանությունները դասավորելով դրանք ըստ այբուբենական կարգի։

1. Ա Գ Ա Ր Ա Կ

Ագարակ «արտ, տիրած հողամաս»։ Այս հասարակ անունը դարձել է նաև հատուկ անուն և երկու տեսակով էլ մեզնից անցել է վրացիներին, ուր agarakī, agara նշանակել է «поле, пахотная земля; луг; село; зародный дом, дача» (Чубинов, Груз.-рус. слов., 1887 г., էջ 4). Կա և Agara գյուղանունը իր շաքարի գործարանով։ Սուսերա-ակկադական դուկումենտներում բառը հնչվել է agar (կամ akar) և նշանակել է «արտ, ցանքադաշտ, մարգագետին» (Flur, Gefilde), որպիսին գործ է ածվել և խեթական արձանագրություններում, փոխարինվելով երբեմն խեթական kueraš համազոր բառով (տես, որինակ, KBo, II—III, № 11, էջ 81, նաև Հրոզնու Bogh. St., III, էջ 213)։ Բառի սուսերական ծագման վրա առաջին անգամ մատնանշել են արեւ Սազրգյան (Հանդէս ամսօրեայ, 1905, էջ 335) և Karst Տեղեկագիր 3—4.—2

(Գուշարձան, էջ 402), որոնցից անկախ հուշն հմ արել և ես իմ ժուրնարտուի պատմության մեջ (էջ 36)։ Դեռ ավելին, ինձ համար ոչ մի կասկած չկա, որ ինչպես «աստղ» բառն է անցել հնդեւրոպական լեզուները սեւական Ishtar դիցունու աստրալ պաշտամունքից (հուն. aster, լատ. stella, գոթ. stairno և այլն), այնպես էլ agar բառն է անցել այդ հուշն լեզուները (հուն. և լատ. ager, գերմ. akker, akr և այլն), ի բաց առյալ բախտիկ-սլավոնական լեզուները։ Սուսերաւակկադական agar բառի այդպիսի աս-բաժումը գեպի հյուսիս (Ուրարտու—Հայաստան, Վրաստան) և գեպի արեւմուտք (Եվրոպա) և այլն անշուշտ պայմանավորված է եղել այդ agar-ի սպեցիֆիկ հասարակ-անտեսական նոր արժեքավորմամբ, որպես ստրկատիրական կամ ֆեոդալական հարաբերության մի նոր ձևավորում, մի նոր տեղի։ Եվ այս բոլորից հետո միանշանակ ընկալելով և տեղեկացնելով մտքի արդյունք պիտի համարել վերաստեղծել հնդեւրոպական նախալեզվային *ag-er բառը, որը իբր թե հայերենում դառնում է *ածեր>*ած>*արծ>արա, իսկ այս իմաստից էլ ստացվում է նոր առում «գորս» (արտաքս, արտաքին և արտ- մասնակր)։

2. Ա Կ Ո Ւ Թ

Ակուտ «թրծած կտվ, աղյուտ» (кнрпшч) — ակկ. agurru հուշն իմաստով («Backstein», տես Br. Meissner, Die Keilschrift, էջ 101)։ Հյուրշմանը այս «աղյուտ»-ը դասում էր պարսկական փոխառությունների շարքը, ինչպես որ հուշնը կրկնել է և Հ. Աճառյանը (Արմ. բառ., I, 15)։ Հյուրշմանը, բերելով պարսկ. agur, ասորիկ. agura և արար. ajur (ajur) ձևերը, մատնանշում էր դրանց ասորական ծագումը և հայերենից այդ բառի տնցումը Կովկաս, օրինակ, վրացիներին (տես նրա Арм. Gr., էջ 510)։ Բայց հայոց աղյուտ բառի վերջին «ո» բաղաձայնը ի փոխարեն ակկադական er երկու բաղաձայնների չի խոստում հայոց այդ բառի փոխառության մասին իրանական agur ձևից, այլ ակկադական agurru ձևից, թեպետ և ոչ անմիջապես։

3. Ա Կ Ո Ւ Բ

Ակուտ «բրիչ, փր. pic»։ Այսպես է թարգմանում նորահայտ հայ բառը Հ. Դաջունին իր «Բառգիրք արուեստից և գիտությունից և զեղեցիկ դպրութեանց» (Վենետիկ, 1892 թ., հատ. Բ, էջ 329), ինչպես մատնանշում է Հ. Աճառյանը իր Արմ. բառ.-ում (V, 77)։ Քաջունին բերում է երկու վկայություններ այս ակուտ բառի համար, առանց աղբյուրը հիշատակելու — «Ի ներքուստ ակրովք և կտցաւոր մրճովք փորելովք և մյուսը՝ «փորէ ուհիւ և ակրովք»։ Այս վկայությունները ուղղել են տալիս Խորենացու «Պատմության» (II, § 28) մեջ բերված նման մի դարձվածքի «սակրովք» բառը, որը պիտի ուղղել «ակրովք», ինչպես և գրված է մի ձևագրում (Կ- 6 ըստ Տիգրիսի հրատ., էջ 290)։ Այդտեղ կարդում ենք, «և ի ներքուստ կացնովք և սակրովք երկրերանովք և կտցաւոր մրճովք փորել զհիմունսն»։ Ոչ մի կասկած, որ այս «սակրովք»-ը պիտի ուղղել «ակրովք», իսկ բառի սկիզբը համարել ոչ թե *ակիր, այլ ակուտ։ Ըստ Դաջունու երկու վկայությունների և Խորենացու նման գործածության ակուտը մի գործիք էր, որ մոտ էր կացնին, մուրճին և բահին, կարող էր լինել «երկրերան», և նրա-

նով փորում էին գետինը և պարիսպը: Խորենացին նկարագրում է, թե ինչպես պարսից Նապուհ ուրքան Տիգրանուկերտի առման ժամանակ պարսպին մոտեցնում է մի «գործի մեքենայից», որը կոչվում էր «էշք», անվավոր էր և հրեքական մարդկանց կողմից տարվում էր (սեղեալ տարեալս)՝ դեպի քաղաքի պարիսպը: Գործիքի միջից գործադրվում էին կացինը, ակուրը և մուրճը: Իմ կարծիքով այդ ակուրը հայերին անցել է ակկադական akkulu ձևից, որ նշանակում է «կացին» (Axt, տես A. Ungnad-ի մոտ, էջ 136): Հավանորեն սա կաշնի մի տեսակն էր կամ նման մի գործիք, որով պատը քանդում էին և դետինը փորում, որովհետև ասուրա-բարեյակցիք ունեին և xasšiu (= կացին) բառը: Ակկադական akkulu բառի դիմաց հայերեն սպասելի էր *ակուդ կամ *անկուդ: Եվ իրեք այս ձևն ևս մնացել է հայերենում «անկիւդ» գրությամբ, որպիսի նորահայտ մի երկրորդ բառ բերում է նույն Բաջուենին, բացատրելով այդ բառը որպես «մանգաղ» (հատոր I, էջ 14, տես Հ. Աճ., Արմ. բառ., VII, 86): Համեմատել վրաց angala «բահ» (ანგალა, տես Ujgorn, էջ 39): Անուշտ բաջուենու այս բացատրությունը մոտավոր պիտի համարել: Թե ակուրը և թե անկիւդը ձևափոխություն են ասուրա-բարեյական akkulu «կացին» (= կացնի տեսակ) բառից, միայն թերևս տարբեր ժամանակների և փոխանցող ժողովուրդների փոփոխվող հանգամանքների շնորհիվ: Akut բառի վերջին «t» բազաձայնը այնպես է ստացվել հին «l»-ից, ինչպես նույնը կատարվել է և գարշապար բառի վերջին «r»-ի հետ (garšapar < *gursapal):

1. Ա Ա Ա Գ

Աղագ կամ Աղագ «ճանապարհ, միջոց»։ աղագա «պատճառով, համար», յաղագս «համար»։ Այս «աղագ» (= пѹтъ) բառի հետ Հ. Աճառյանը համեմատել է վրաց alagi «շավիղ» (пѹтъ, степя) և «տեղ», արխագ. alago «ճանապարհ» (Արմ. բառ. I, 112, 113), որպես փոխառություններ հայերենից: Անուշտ մեր գաղափարն աղագ «առաջ» (впередѣ, раньше) բառը նույնն է, ինչպես դիտել է և Հ. Աճառյանը (ibid.) իմ կարծիքով հայկական, ինչպես և վրաց-արխագական alag ընդհանուր այս բառը, նշանակելով հիմնականում «ընթացք, пѹтъ», գալիս է Միջագետքի սեմիտներից, ուր alak-u նշանակում է այդ նույնը («Gang, Verlauf», տես A. Ungnad-ի մոտ, էջ 137): Համեմատել նաև alak-lu «Weg, Wandel», allaku «Bote» արբար. alku «посланец», alaka «он был посланцем»¹: Ակկադական alak «ճանապարհ, ընթացք» բառը հայերենում հնչյունաբանորեն պիտի դառնար ալիլի շուտ «աղագ» (alaki):

5. Ա Ն

Աճ- նախածանց է եղել թե զրարարի մի քանի ածանցյալ բառերի մեջ և թե այժմյան բարբառներում, կապ չունենալով ժխտական նմանահունչ նախածանցի հետ: Այդ նոր ածանցի իմաստն է եղել «վրա- համար»։ Այս մասին գրել է մ. դեռ 1927 թվին (տես Գիտ. և Արվ. ինստիտուտի «Տեղեկագիր», 1927 թ., № 2, ինչպես և առանձին արտատրյալը. էջեր 4—6):

¹ Արդյուր մեր առաքեմ բայը կազմած է առ- + ար (առք) մասերից, ինչպես բացատրվում է Արմ. բառ-ում: Ըստ իս հնարավորություն կա այդ բայը կազմեցել և ակկ. al-lak-u «առաքեալ» (Bote, пошлец) բառի հետ, որը կա և արաբերենում:

Աճ- մասնիկը «վրա, համար» իմաստով պահել են, որինակ, հետեյալ բառերը - 1) անձեռոց, անձեռոցիկ «ձեռքի սրբիչ», сапфетка», որ տառացի նշանակում է «ձեռքի վրա=ձեռքի համար»։ 2) անուսնեայ «զահի պատվանդան», կազմված անոտին բնից+եայ վերջամասնիկը, իսկ ան ոտին նշանակել է «ոտի համար» (կամ դահի ոտի համար, կամ նստողի ոտի համար)։ զործ է անվել «Գիրք մնացորդաց-ում (տե՛ս Ս. Ամասունի, Հայոց բառ ու բան, 1912 թ., 38) — «Ան արար արքայ գաթոն փղոսկրեայ... և անոտնեայ մի ոսկի արձողան»։ 3) անսոմբ «ոտքին կողմը, ոտքին ծայրէն զուրս» (ըստ Առձ. բառ.-ի)։ 4) անկողին (постель), որ տառացի նշանակել է ան կողին «կողքի վրա, կողքի համար» և անցել է քրդերին kulin ձևով առանց ան մասնիկի։ 5) անոնի (բարբառներում) «կաշիէ լայն փուկ, որ ձիուն պոչին տակէն և զավակին վրայէն անցնելով համետին երկու կողմերուն կապուած է» (Հ. Աճ., Գալ. բառ., 106)։ տառացի նշանակում է «ետույքի վրա (համար)»։ 6) անթանի մշեցոց մոտ նշանակել է «բահակոթի վրա հազցրած տափակ փայտը, որի վրա ոտքը դնելով և զարկելով փորում են. թուրք. թափաղ» (Ս. Ամասունի, 61), որը տառացի նշանակում է «բահի վրա (համար)»։ 7) անթոլկի մոկացիներին և վանեցոց մոտ նշանակել է «նետել, շարտել», կազմված լինելով ան- և թորկել (թորկել) «զցել, նետել» մասերից (անթորկել տառացի պիտի նշանակեր «դենը զցել, վրան զցել» = անծրոսիտ, набросить)։ 8) անթիե խարբերոցոց մոտ նշանակել է «թոնիբին կողին կպցրած լավաշը ինքնին փրթելով թոնիբին մեջ իյնալը» (Հ. Աճ., Գալ. բառ., 99), կազմված լինելով ան+թափել «ընկնել» մասերից. (թափել արարատյան բարբառում նույնպես նշանակում է «ընկնել», օրինակ. դեղձը թափեց, տերեղ թափեց և այլն)՝ Այսպես նաև մի քանի այլ դեպքեր այդ ան- նախածանցով, որ զոյականի հետ դրվելով կարծես թե պահանջում է տրական հոլով (ան ոտին, ան կողին, ան ոտի, ան բահի)։ Այս ան- այժմ մեռած մասնիկը ես վերոհիշյալ իմ աշխատության մեջ («Հնեաբանական մի քանի մնացորդներ հայերենում») կապակցել եմ հնդեվրոպական լեզուներում նման ֆունկցիոն կատարող ան կամ ան նախամասնիկի կամ նախ-

⁵ Երբեմն ան- այս նախամասնիկով ածանցված բառը նորից է ենթարկվում ածանցման և ան-ի անմիջական նշանակությունը կարծես թե քողարկվում է, Օրինակ՝ անձեռոց, անբահի, անոտի, անկողին... կամ անթալկել, անթիե և նմանները շատ պարզ են, բայց սրանք կարող են նորից ածանցվել, ինչպես տեսնում ենք անձեռ-ոց-իկ բառի հանդեպ, կամ անոտնեայ պատվանդան» բառի մեջ, որը սկզբում պիտի լիներ «անոտին», այսինքն՝ ոտը դնելու համար Այդպես է նաև անդեղեղայ զեղթիւթ, противоджд», որ տառացի պիտի նշանակեր «թուշի (—դեղ) համար» և սկզբում պիտի լիներ «տեղեղի»։ նմանապես զրաբարում ունենք «անկալուրդե», որ թարգմանում են «կաշիկի երեսը կամ տակը», «կաշիկի տակը» ներբանի խորը, ուր ընդհատում է կաշիկ կարը (տե՛ս Հ. Աճ., Արմ. բառ., I, 343)։ Լստ իս հնում եղել է անկաբել, ինչպես ունենք անթիեյ. անթալկել և այլն, և նշանակած պիտի լիներ «վրան կարել», իսկ այստեղից արդեն ածանցված անկարուրդ նոր բառը («վրան կարվածք»)։ Երբեմն ան- մասնիկը ինքն է ընդունում և՛ կամ Զ նախածանցը և ստացվում է լսն- կամ զան- բարդ մասնիկը, ինչպես տեսնում ենք յանխուլ—զանխուլ «զադտնի, ծածուկ» կազմության մեջ, կազմված թուլ էշտոդ, немолъ ածականից։ Իմաստի փոփոխության տեսակետից (խուլ>ծածուկ, զադտնի) համեմատել խեթերեն du(d)um «խուլ լինել» (duddumianza „Tauben“, «խուլ, խլացած»)։ որից duddumili-peda «զադտնի տեղ» (duddumili „unhörbar, leise, heimlich“)։ տես այս duddum-արմատի ձևերի և տարբեր իմաստների մասին H. Ebelolf-ի հոդվածը Kleinas. Forschungen, B. I, էջեր 393—400, Այնպես որ հայոց յանխուլ || զանխուլ «ծածուկ, զադտնի» բառերի ան- մասնիկը բացասական մասնիկ չէ, ինչպես սույն է տալիս խեթերեն օրինակը։

դիրի հետ (հունար. *ana-* „вверх, по“ „per“. զոթ. *ana* = գերմ. *an* «մոտ, վրա», սանսկր. *ana-* «ալին») Այժմ ինձ ավելի հավանական է թվում մեր այդ հին *an-* («վրա, համար») մասնիկը սերել սեմական աղբյուրից, թեպետ սրանով ես չեմ ուզում մերժել երկու ակունքների էլ կոնտամինացիան, որ երբեմն տեսնում ենք և այլ բառերի ծագման ու ձևավորման մեջ: Համեմատել հենց արինակ մեր *ես* (*es*) դերանվան ծագումը, ի նկատի ունենալով լատ. և հուն. *ego*, զոթ. *ik*, սլավ. *azъ*, ավեստ. *azəm*., իսկ մյուս կողմից ուրարտ. *ieše* (հնչվել է *ies*), խուրրիսկ. *iš*—*aš* (հնչվել է *is*—*as*), Հայոց *an-*ը կամ Հայաստանի անդրաձիններից մի մնացորդ է, որը նման է սեմականին, և կամ սեմական ծագումով է և անցել է այդ նախահայկական ժողովուրդներին և հետո նաև հայերին: Ըստ A. Ungnad-ի (էջ 138) ակկ. *ana* նախ-դիրը նշանակել է „zu („hin), nach für“, իսկ ըստ B. Meissner-ի դա նշանակել է „nach; zu“: Այս նախդիրը գոյականի հետ տալիս է տրականի ֆունկցիա, որպես շահի տրական (ANA ¹Abimarda = Արիմարգային, Արիմարգայի համար), որ այնքան նման է մեր հայոց *an-*ին (ան-ձեռոց, ան-կողին, ան-բահի, ան-ոռի): Տես նաև ստորև հայոց «ըստ» նախդիրի մասին, որը շատ լավ բացատրվում է նույնպես ակկադական (resp. սեմական) լեզվի աղերսով, եթե չխոսենք մեր «ընդ»-ի մասին իր «հետ, միասին», «գեպի, ուղղությամբ» իմաստներով, որ համընկնում է ակկ. *adi* „bis, zu, bis, nebst“ կամ *lul* „mit“ նախդիրներին թե իմաստով և թե հնչմամբ:

6. Ա Ն Կ Ե Ղ

Անգեղ աստվածանունը թարգմանություն է հայ Աստվածաշնչում սուրբա-բարելական ներգալի, որը մահվան և խորշակի աստվածն էր: Հայոց Անգեղ (Angel) անունը իմ կարծիքով Միջագետքից է գալիս, որտեղ բուն ակկադական նման աստվածը հնչվել է *ankullu*, որ նշանակել է «խորշակ, знойный ветер» և դործ է անվել նաև խեթական բնագրերում *an-hullu* (= *anxullu*) ձևով: Այս մասին ես գրել եմ դեռ իմ „Хеттские боги у армян“ (Ереван, 1940 г., 49, 56) աշխատության մեջ: Ակկադերենում կար և սրա փոփոխակ ձևը, մի քիչ էլ տարբեր իմաստով՝ *imhullu* (= *imxullu*), որ նշանակել է «չար քամի»: Ակկադերենի *ankul(l)*- բառարնի դիմաց հայերենում սպասելի էր **angul* (*անգուղ), եթե, իհարկե, հայ փոխառությունը լիներ անմիջական և կամ հենց ակկադական ժողովրդական մի բարբառում չլիներ **akkil* տարբերակը, որը նույնպես հնարավոր էր: Վերջին հաշվով հայոց *angeł* և բուն ակկադական *ankul(l)*- աստվածանունների մեջ կա միայն չնչին տարբերություն ըստ միջին ձայնավորի: Հայերենում «դ»-ից առաջ «ե» ձայնավորը արտացոլում է հին «ի»-ն, որինակ, Նեղոս (<Nilos), Սելեուստրոս (= Сильвестр), Եկեղիք = Akilisēnē, Բարսեղ = Basileus, Թեղ (= սեմ. thila) քուր, թումք և այլն և այլն: Մատթևոսի ավետարանի մեկ-նություն մեջ, որ ավել է Հ. Ոսկերեքանը (Բ, 15), հույն Erinós վրիժառուության աստվածուհու փոխարեն հայերենում ունենք «ընզդայ», Ուրեմի սա «ծովային առասպելական մի հրեշ է» («Արմ. բառ», II, 1032): Արդյոք այս հայկական բառը ասորական-արամեական ծագումով չէ*, որտեղ պիտի լիներ *angla*, իսկ սա էլ իրեն հերթին փոխառած լիներ ակկադական *ankul(l)* աստվածանունից, որ նշանակել է «խորշակ, знойный ветер» (կամ *im-xullu* «չար քամի»): Այս համեմատության համար միայն մի փոքր խոչըն-

դրու կա իմաստի տեսակետից, որովհետև ակկադական ankullu (imxullu) բառը նշանակում է խորշակ (չար քամի), իսկ հայոց բառը՝ մոխմառության ծովային մի աստվածուհի, այսինքն՝ ծովային չար աստվածուհի։ Մի դեպքում չար քամի, մյուս՝ զեպրում՝ չար աստվածուհի։

7. Ա Ն Գ Ղ

Անգլի մի շարք գյուղերի կամ ավելի շուտ ամրոցների անուն է հին Հայաստանում, ինչպես նաև Անգեղ ասան նախարարության անունն է, որ գալիս է «Անգղ» հայանի բերդաքաղաքի անունից (այստեղից էլ՝ Տորք Անգեղեայ)։ Սկզբում այս հատուկ անունը եղել է սովորական հասարակ անուն, նշանակելով բերդ, ամրոց։ Այս հասարակ առումը տվել է զեռն. Աղոնցը, երբ խոսում էր Անգեղ տան մասին («крепость», ահա նրա Арм. в эп. Юст., էջեր 41—42)։ Նման հասարակ առում կարծես թե զգացվել է զեռն XIII դարում, օրինակ Սա. Օրբելյանի մոտ («յստորոտս Երդաբարի միոյ ի նեղ ձորակի անդ... որ և տեղին կոչեցաւ Ասգեղ ասր. տես իմ Իստ.-լուսն. знач. топонимич. др. Арменни, էջ 83, ծան. 1)։ Ասորիների մոտ Անգեղ տունը կոչվել է Egiil կամ Agel։ Մի հեղինակի մոտ (Исус Столпник) կարգում ենք, որ պարսից թագավոր Գադադը ավերեց Agel-ը։ Suph-ը [=Շոփ] և Armenia-ն (տես ն. Աղոնցի մոտ, էջեր 41—42)։ Հունա-հռոմեական գրողները այդ Անգեղտունը կոչել են Angelena, Ingelene (ibid.)։ Հայաստանում «Անգղ» անունով ամրոց կա Ծաղկուն գավառում, այժմյան Դիաղինից քիչ հարավ։ Դար «Անգղ» և Վան քաղաքից քիչ հեռու։ Հայոց angl հասարակ անունը, ստացված լինելով ավելի հին *agil ձևից (համեմատել ասորիների Agel անունը այժմյան Agil տեղանվան հետ), իսկ սա արտացոլում է սումերական egal բառը, որ նշանակել է «պալատ, ապարանք» և անցել է ասսուրա-բաբելոնյան ekallu ձևով։ Ուրարտական արձանագրություններում սումերական E GAL գաղափարների շրջանում նշանակել է «բերդ, ամրոց» (Burg), ինչպես հիշատակելով դրան է J. Friedrich-ը։ Հայերից այս «անգղ» (բերդ) հասարակ անունը անցել է նաև վրացիներին, որ ես տեսնում եմ «M-angl-isi» անվան մեջ («m» նախածանցով), ինչպես via armeniaca անցել են վրացիներին նաև Agaraki, Karbi (Պորիի մոտ), Kelasura (Սուխումիի մոտ), որը հայոց «Նիգեսուր»-ն է։ Այս հին Koelesyria անունն է, որ Փյունիկիից Փոքր Ասիայի վրայով անցել է իմ կարծիքով և Բաղկանյան թերակղզին (համեմատել Ալբանիայի Kelasura քաղաքանունը), պահպանելով նաև մեր Առվեստական Հայաստանի «Փյունասորի» անվան մեջ, որ ժողովրդական ստուգաբանության է ենթարկվել (գյուլ «լիճ» և ասորի)։

1 Ն. Աղոնցը այս Անգեղ ասան մասին հետևյալն է ասում. «Аршакидами необходимо было приобрести опорный пункт на юге, в том районе, который играл столь большую роль в римо-персидских столкновениях; они утвердились в крепости Ангел, чем и положено было основание для образования особого кантона Ангелены по имени крепости. Под нее отошла часть Софачены вокруг замка Ангела, омываемая речками Зибана и Аргана. Развалины знаменитого замка Ангела лежат при местечке Агилы, удержавшем древнее название» (ibid., 42)։ Ըստ Փափաստի այդ Անգղը «ստան արքունի լիայն կամ թե այնպեղտանն... գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց, բազում գանձք մթերեալ քաջալ կային» (ibid.)։ Հիշենք և Խորենացու «Տորք Անգեղեայ» որ ցույց է տալիս այդ տեղի նաև կուլաական բնակչությանը։

Տ. Ա Ն Ո Ւ

ԱՆՈՐ (անաթ) բառը, ինչպես առաջին անգամ նշել է Բ. Քալա-
թյանյը (Հանդէս ամսօրեայ, 1902 թ., էջ 399)¹, նույնանում է ասոր.
ܐܢܐ և նույնիմաստ բառի հետ: Այդ նույնը անկախ կերպով ես տեսել եմ նաե-
լիս «Ռարառուի պատմութեան» մեջ, էջ 37², թեպետ այժմ պիտի այդ ճշ-
գրտել այն իմաստով, որ հայոց «անօթ» բառը ես կապակցել եմ սուսի-
րական ܐܢܐ բառի հետ, այնինչ այս բառը անցել է ակկադերէնը, որտեղից
միայն հայերը կարող էին վերցնել, այն էլ ոչ անմիջապէս Հ. Աճառյանը
իր «Արմ. բառ.-ի շարկութեամբ» (VII, 87) առաջարկում է հայոց անօթ
բառը կապել եգիպտական ܐܢܐ «Եղջուր, գինու աման» բառի հետ: Հայե-
րէնում անօթ բառի «ܐܢ» զիջատնգը, ինչպես ահանում ենք, արատադուում
է սուսիւրա-ակկադական ܐ և Ժայնալուրը (ակկադերէնում ܐ)³, ինչպես նմանը
եւ կմասնանշելի նաեւ սուսիւր. ܐܢ Եղջուր և հայոց աւղի (օղի) նույն-
իմաստ բառերի մեջ. շամիմատիւ նաեւ սուսիւր. ܐܢ Եօր և մեր աւղ (օղ)
բառերը, եթե չհաշվենք երեք պատահական նման նմանութեանը ակկ.
ܐܢ Ելույս, օր» բառի և մեր աւր (օր) բառի միջև, որը կապակցում է
հուն. ܐܢܐ (= օր) բառի հետ, թեպէս Հյուրըմանը այս կապը հարցականի
աակ էր դնում (Arm. Gr., 426), իսկ Հ. Աճառյանը այդ հունական և հայ-
կական բառերը շնչեկրոպական նախադասութիւն է հանում (*amur), ինչպես
առաջին անգամ առաջարկել է A. Meillet, Այսինքն՝ *amur > *amur հայոց
ܐܡܐ (աւր, սեւ. հոլ. աւուր):

9. Ա Շ Տ Ա Ր Ա Կ

Աշտարակ բառը, ܐܫܬܪܐ, զորն է ածվում թե որպէս հասարակ
անուն զեւ առաջին հայ թարգմանական գրականութեան մեջ և թե որպէս
հասուկ անուն, օրինակ, հիշվում է Արտաշատանի Աշտարակը, Բագրեվանդի
Աշտարակը, Սյունիքի Աշտարակը կոչական գաղափարով (Ստ. Ռրբէյան,
Տիգրիս, 1911, էջ 520): Այս բառի արմատն է astar-, իսկ -ak-ը հին մաս-
նիկ է, որ տեսնում ենք մի շարք բառերում (աղարակ, խորշակ, կրակ, ծա-
լակ, սակարակ և այլն) և որն այնքան սիրված է եղել հին պարսկերէնում
և էլամերէնում: Այս արմատը համընկնում է Istar աստվածուհու խոնա-
ւանյան արմատին (Astar-) հետ, որ տեսնում ենք Astarit, Astarta անուն-
ներում: Իսկ որ այս անունից, այսինքն Astar- ընդ, կարող էին առաջանալ
նաեւ այդ զիջուհուն նվիրված խորհրդանշ Ֆետիշ-քարերը, որոնք կոթող-
ներ էին, այդ շատ հնարավոր է. բժրախտաբար այդ քարակոթողների նման
հորջորջման մասին տեղեկութեան չկալ: Միակ վկան կարծես թե հայոց
«աշտարակ» ձեւն է, որ ըստ իս Aštar-, այսինքն՝ Ištar աստվածանունից
պիտի լինի: Փյունիկյան Astarta-ն տարածված էր ոչ միայն բուն փյուն-
իկիւնում, այլև նրա գաղութներում: Մինչև իսկ Անգլիայում, Նորսու-
րերլանդյան կորրորջում գտնված է մի արձանագրութեան, որ սկսվում է
Astartes bonon «Աստարտայի մեհյան» բառերով (տե՛ս Ե. Կրաք, Hist.
der. Boct., II, էջ 14): Իսկ փյունիկիւնում ֆետիշ-քարերը («beth-il» = տուն)

¹ Տե՛ս Հ. Աճառյանի մոտ (Արմ. բառ., I, էջ 388):

² Տե՛ս A. Ungnad-ի մոտ՝ unutu «Gerat», էջ 159, որը իզուր է այդ բառը գրում
ܐܢܐ-իւ Ժեղ, այսինքն՝ ܐܢ մասը ամանց համարում:

աստծո) կոնաձև կամ սյունաձև էին (ibid., 16)¹։ Դեռ Հերոդոտը խոսում է երկու ստեղծանքի մասին Տիր քաղաքում, նման կոթողներ կային և Սողոմոնի տաճարի առաջ երուսաղեմում, Հիերասպոլում, Կիպրոս կղզու Պաթի տաճարում (ibid.)։ Իսկ Կարթագենում Վալ-Խամմոն արև-աստծու անունով հայտնի էին «խամմանիմ» կոչված քարերը, որոնք սյուներ կամ օբելիսկներ էին (ibid., 14)։ Հույների մոտ Հերմես աստծու անունով հայտնի էին «հերմես» քարերը։ Այս բոլոր նկատառումով ոչ մի դժվարություն չի ներկայացնում հայոց աշտարակ բառը իր բովանդակությամբ և ծագումով կապակցել Istar աստվածուհու խանսանյան ձևի հետ և Փյունիկիի և Ասորիքի վրայով անցած համարել և հայերին։ Անմիջական աղբյուրը այս դեպքում սյուրիական-արամեականն է։

Որ Բշտարը հսկայական դեր է խաղացել հին Մերձավոր Արևելքում, այդ երևում է և նրանով, որ նրա աստրալ նոր բնույթի պատճառով նրա անունը անցնում է հնդեվրոպական մի շարք ժողովուրդներին, բացի բալտիկ-սլավոնական ցեղերից, որտեղ «աստղ» անունը ծագում է այդ Istar-ից, ինչպես հուն. aster, հայոց astl, լատ. stella, գոթ. stairno (դերմ. Stern), իրան. star- և այլն։ Այս հանգամանքն ևս կարող է խոսել հօգուտ մեր բերած վերևի ասուգարանությանը, այն է՝ Աշտարակ անունը սերել Բշտարից, resp. Astar-ից (Astar-ից), այսինքն նրա սյուրա-փյունիկյան ձևափոխությունից։

10. Ա Ս Ե Լ

Աստի «ամուսնության համար նշանած ընտրել, աղջիկ ուզել»։ աստուլ «աղջիկ ուզող, նշանած, փեսացու»։ Ըստ Առձեռն բառ.-ի՝ հաստիմ «նշանուիլ (աղջկան)»։ տե՛ս Հ. Աճառյան, Արմ. բառ. I, 566—567։ Սրանց արմատն է ast- (hast-), որը չի ստուգարանված։ Ոչ մի կասկած, որ ast- արմատը հնդադեյն մտածանակ նշանակած պիտի լինի «կին»- (жена), ինչպես ուսերենում ունենք жена բառից жениться (= աստել), որից жених (= աստուլ)։ Այս հետաքրքիր բառարմատը, որ երևան է բերում իրեն ճիշտ ձևով ու բովանդակությամբ Հ. Աճառյանը, ըսա իս ունի շատ մեծ նշանակություն, որովհետև եթե դրա աղբյուրը ասուգարանականն է, ինչպես ցույց կարվի, բայց և մեզ անմիջապես անցել է խուրրի-միտանյան լեզվից։

¹ Փյունիկեում կատարված պեղումները նույնպես վկայում են այս քարակոթողների կամ սյուների մասին Բ. Տուրանը այս մասին ասում է հետևյալը. «Весьма многочисленны каменные столбы, найденные в разных местах и представляющие так называемые малые фетиши, пред которыми или непосредственно на которые совершались возлияния. Иногда они стоят рядами и даже образуют уличу, храм, иногда у частных домов, как объекты домашнего культа». (տե՛ս նրա գիրքը, էջ 23)։ Բայց Բ. Տուրանը խոսում է խանսանցիների մի սովորության մասին, որը հարապել է և հայ ֆուլյուրական մատերիայներում, այդ մարդկային զոհն է շենքերի կառուցման ժամանակ, ևս ասում է. «Найдены доказательства существования у хананеев общего весьма многим (напр. древнеамериканским) народам, обычая человеческих жертвоприношении при постройках, основаниях городов и т. п.». В Тааннике у ворот кремля найден скелет мальчика... В Гейере найдены женщина и ребенок замурованными, а также «Мегиддо» и т. п. (ibid.)։ Ես ինքս անձամբ լսել եմ Աշտարակում, թե իբր գետի կամուրջը շինելիս հիմքում կենդանի երեխա են զրկել, որ կամուրջը ամուր լինի։ Արդյո՞ր նման մատիվներ անկախ են ծագել ժողովուրդների մեջ, թե կարող էին և տարածվել։

Արդեն Jensen-ի (ZA 14 S. 173 f.), Messerschmidt-ի (Mitanni-Studien, S. 18. f.) և Ungnad-ի (ZA NF 1 S. 137) կողմից ցույց է արված, որ խուրրի-միտաննյան լեզվում *ašti*- նշանակել է «կին» (Frau), որից *asduhi*- «կնոջական, իգական» („weiblich“), որի հակառակն է՝ *duruhhi*- «արական» (mannlich). տես J. Friedrich-ի հոդվածը „Zum Subaraischen und Urartaischen“, տպված 1935 թվին *Miscellanea orientalia* հանդեսում՝ Հոռմում (*Analecta orientalia*, № 12, էջ 123). Բայց խուրրի-միտաննյան *ašti*- «կին» բառը իր հերթին փոխառյալ է, որովհետև բաբելական լեզվում կար *assatu*, որ թարգմանվում է *epouse* (կին-ամուսին): Այս բառը ինձ հայտնի դարձավ Fr. Hrozny-ի հրատարակած խեթական օրենքների կողիքսից (էջ 148), ուր սումերական DAM („epouse“) ունի բաբելական *aššatu* «իմ ամուսինը (կինը)» բառի -ti լրացումը (DAM^{ti}), — մի բան, որ հաճախ է լինում խեթական կամ ուրարտական բեկնագիր փոխադրության մեջ:

11. Ա Ր Ա Պ Ի Լ

Արափիլ (*arct*) թռչունի անունը Lagarde ստուգաբանել է հուն. *pelargos* նույնիմաստ բառով, որ նշանակում է «սև-սպիտակ» (*pelos* «սև», *argos* «սպիտակ»): Հ. Աճառյանը բերելով այս կարծիքը սկզբում դեմ էր սրան (Արմ. բառ., 1, 609), բայց հետո միայնով սրան (VII. 96 և Հայ լեզ. պատմ. 142), գտնելով, որ հունարենը մի ժողովրդական հարմարանք է (*Volksetymologie*), վերցրած փոքրասիական մի ժողովրդից՝ **paragl*- նախադրից, որը աղբյուրն է և հայերենի: Այս կարծիքին հավանություն է տվել և A. Meillet (*ibid.*): Բայց, այստեղ կա հետևյալ առարկությունը: Նախ, միայն հին հնդեվրոպական բառերի սկզբի „p“ բաղաձայնն է հայերենում անհետանում, կամ „h“ դառնում, այն ինչ, օրինակ, խեթական բառերը, որ նույնպես շատ հին են (մեր էրայից մոտ երկու հազար տարի), հայերենում այդ սկզբնական բաղաձայնը պահում են. հնչելով *ph*- օրինակ— խեթ. *pitar*=հ. փետուր, խեթ. *pittula* (կամ թերևս *pattula*) բրդի քուլա մանեղու համար=մեր գավառ. փաթուղ, փաթիլ, խեթ. *partipartiskizi* «մասնատում է, կտրտում» — հայոց փերթ «կտոր» և այլն: Երկրորդ, մեր «արափիլ» ձևին շատ նման է սումեր. *arigilim* «մի բարձրասրուն թռչուն», որոնց այսպիսի ընդհանրության վրա մասնանշել են Karst (Յուշարձան, 402) և Սագըղյան (Հանդ. ամս., 1909, էջ 335): Ըստ իս սումերական *arigil*-ը այլևայլ ճանապարհներով, թեկուզ հենց և ասուրաբաբելացիների միջոցով կարող էր անցնել Հայաստանի անդրաժիններին և ուրեմն և հայերին:

12. Ա Ր Ա Լ Է Յ

Արալիզ նշանակել է մի տեսակ երևակայական էակ կամ աստվածություն, որ իջնում է երկնքից, լիզում է ընկած հերոսին և հարություն տալիս: Ըստ Եգնիկ կողրացու արալեզը (որ գրվում է և արլեզ) սերվել է շանից: Ա. Սեյսը (A. Sayce), որ մեր խալդաագիտության հայրն է, այս բառը կապակցում էր ակկադական *arallu* բառի հետ, որ նշանակում է «ստորին աշխարհ» (ըստ B. Meissner-ի *arallu* „Unterwelt“, էջ 103): Ես այս տեսակետը կպաշտպանեմ նրանով, որ վերջին -ez մասնիկը զուտ տեղական է, հայկական թե նախահայկական, և կա օրինակ մի շարք բառերի մեջ, որ կենդանի են նշանակում, օրինակ— անկաջ լորէզ (=նապաստակ), որ դա-

վառական բառ է, մողղգ, խլկղ, խոնջուղ (< *խոնջուղ-ից), որը նոր նախ-
նախնում նշանակել է առան չարգախներում ապրող ողիս (DOMOBON) և
այլն: Սեյսի ստուգարանության մեջ միայն իմաստի անսակերտից կարող է
ստորկոթյուն լինել, քանի որ դժվար էր հրկնից իջնող և շանից սերված
մեր արալեդին կապակցել դժոխքի հետ¹:

Գ Լ Ի Շ Ա Պ Լ Ի

Խաբշապար ռոտի առկա է նաև բնդուննի, որ սա բառը բառ է
gar և šapar մասերից, ապա տառիներ որպես ռոտո նշանակող բառ ևս
մասամբ տեսնում եմ ուրարտ. kur (= ոտ) և սուսհր. ցաղափարագիր օր-ի
մեջ (նույն իմաստով՝ ոտ), իսկ šapar մասը կա նաև սեմական լեզուներում,
համեմատելով ակկ. šapal «տակը», «unter (den Füssen)», saplu «ներքևի»,
unterer» և այլն (տես A. Ungnad, Babil.-ass. Gram., էջ 54, 159): Այս մեր
մեկնությունը հայերենում սկզբում պիտի լինեի «դուրչապար» (= ոտատակ),
որը ուրեմն ուրարտա-սեմական մի ակունքից է: Հ. Աճառյանը այս բառի
վերջին «պար» մասը առաջադրել է հանել դենդ. pāda «ոտ» բառից (Արմ.
բառ., VII. 193):

14. Գ Լ Լ Խ

Դիսի ցլբաղացի քառուկուսի ձագարածն արկղը, որի մեջ ածուռ են
աղալուց ցորենը (Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ
26): Գործ է ածվել և պարարում դիսն ձեռով (դոխին, դոխամբ) ցլբաղացի
դոխ՝ ձագար» (Աճ. բառարան): Այս dox բնից ևս ածանցված հմ համա-
բույն նաև մեր արարաայան բարբառի դիսիլով բառը, որ նշանակում է — գինե-
տան կամ մառանի պատերին կից շինված փայան հարմարանքը, որը
ուսնի քառուկուսածն արտաքինում մասեր, ուր պնում են կարասները կամ
ափաշները: Այս բառի վերջին -ալ մասնիկը մեզ հիշեցնում է մողխաղ (մալ-
խաղ) բառի նույն վերջածանցը, որի մասին արդեն խոսվել է (տես էջ 15):
Իսկ dox բառարմատը հիմնականում նշանակել է՝ մի բան պարփակող կամ
պարունակող հարմարանք, ամանեղեն (արկղ, անոթ...): Այս բառի նախնա-
կան ծագումը ըստ իս գալիս է սումերական լեզվից, որը իր նշանակու-
թյունը պահել է ակկադերենում, որպես գետերմինատիվ, այսինքն՝ բենու-
գիր որոշիչ ամանեղենի ցույց տվող բառերի հոմաբ (է Կ՝ 2 duk «Determi-
nativ vor Gefassen», տես B. Meissner, Die Keilschrift, Berl.-Leipzig,
1922, էջ 43)²: Անշուշտ dox բառը, ինչպես և doxaz-ը, հնում գոյություն

¹ Արդյոք վրաց lamazi «գեղեցիկ» բառը չի՞ ծագել ակկադ. lamassu «մարդուն պաշտ-
պանող բաբի աստված» (Schmitzotti, տես A. Ungnad-ի մոտ, էջ 148), անցնելով ուրեմն
նախահայկական ժողովուրդների միջոցով:

² Գործ է ածվում Սարգսի Վանի նիշայի մի արձանագրության մեջ հետևյալ նա-
խադասության մեջ—Sardurilli kurili šatuali Սարգսի Վանի (Սարգսի) ոտքերը բռնեցու:
Այս ոճը ինձ հիշեցնում է իսթական արձանագրությունների նման դարձվածքը—mū (i)Re1
-as kattan haliat «meine Fusse fasste er», որ կարդում ենք, օրինակ, Մուրշի II թագա-
վորի մի արձանագրության մեջ (տես Bogh. St., III, էջ 138 ըստ Hrozný-ի հրատարակու-
թյան): Ի միջի այլոց ուրարտական kur բառի ռոտո իմաստը քննարկել է և J. Friedrich-ը
(տես Caucasia, 1931, էջ 131):

³ Սումերական duk «ամանեղեն» բառը հնչվել է նաև dug: Հնչյունաբանական հա-
մադասարանության տեսակետից (սումեր. k || g = հայոց խ) կարելի է ըստ իս համեմատել

են ունեցել հարավային Հայաստանի որոշ ժողովուրդների մոտ (ուրարտացիներ, սեսիաներ և այլն)։

15. ե լ

Ել- կամ Լը- արմատը հայերենում և երեի նախաձայնական որոշ լեզուներում նշանակել է «վերին» (верхний) կամ «բարձր» (высокий), իսկ որպես բայարմատ՝ «բարձրանալ» > «դուրս գալ» > «գառնալ, լինել»։ Այսպես է դրսևարում ելանիմ (անց. կատ. ել-ի) «բարձրանալ (ելանիմ ի լեռոն)», դուրս գալ»։ համեմատել մեր բարրառներում, օրինակ, Աշտուրահում, ըլնել «կերակուրի վեր բարձրանալը» (կերակուրը էլավ), բայց այս արմատը նշանակում և նաև «լինել» (ինչ էլար, լավ իլ)։ Դրսարում եղի, «եղա» (որից եղանիմ) նմանապես այս արմատից է։ Իսկ եղ- կամ եղի- որպես առանձին բառ նախաձայնական շրջանում նույնպես պործ է ածվել «բարձր» իմաստով, որ ևս տեսնում եմ մի քանի պուլգանոնների մեջ, ինչպես եղիպատուշ (եղապատուշ), որ ևլել է Ապարանում (հին նիպում), այժմյան ծածկրու պուլգի անվան փոխարեն, և նշանակել է «վերին պուլգ»։¹ Այդպես և եղիվարդ հավանորեն նշանակել է «վերին ցուր» (համեմատել Քաղավարդ Եներքին ցուր», Գաղվերդ «մեծ ցուր»?, Լաստիվերդ և այլն)։ Դեռ ավելին, ևս կարծում եմ, որ մեր լիեկ բայի լ(ի)- արմատը նույնպես ստացվել է վերոհիշյալ el (el) հիմնական ձևից։ Հնդեվրոպականները մեր el- («ելել») արմատը կապում են հուն. eleutho «գալիս եմ», սանսկր. ro-dhati «բարձրանում է», պոթ. linḍan «տեղի ձևերի հետ. այդպես էր առաջարկում A. Meillet (տես Հ. Աճ., Արմ. բառ., I, 667)։ Իսկ Karst-ը (մուշորձ., 399) շատ ճիշտ կերպով այդ մեր el- արմատը կապակցում էր առաստ. elu «վեր բարձրանալ», elenu «վերին» և սուեմբ. il «բարձրացնել» արմատների հետ (ibid.)։ Ես ևս գտնում եմ, որ մեր el- (el-) արմատը վերին, բարձր իմաստով պատկանել է Հայաստանի նախաձայնական լեզուներին և անցել է նաև հայերին։ Այդ արմատը հնդեվրոպական չէ, այլ տեղական, կապվում է սեմական հետ և թերևս սուեմերական հետ, ինչպես Karst-ն է մատնանշում։ Բայց կա և ավաներենում el «բարձր» (վերին) իմաստով, որ խոսում է այս el «վերին, բարձր» արմատի նաև հարեթական-ասիանիկ լինելու մասին։ Հմտ. նաև ուտիսերեն al «բարձր»։

Իսկ ինչ վերաբերում է «բարձրանալ» պաղափարից «ելնել» նոր պաղափարը ածանցվելուն, ապա սրա համար բողմաթիվ օրինակներ կան շատ լեզուներում։ Համեմատել չենց դրսբարի յաունեմ (անց. կատ. արի «վեր կաց») և բարրառների «արի» (= եկ) իմաստաշրջումը. ակկադերեն elu նա-

մեր զավառական դոն «աղափել» (Ախալթ., Ախալցխ.), լորամարգի (զրբղ), մեծ վառիկ (զրբղ, զարաղաղ), «աղափելու ձագ» (Արարատ), որ տալիս են Ամասունու և Աճառյանի զավառական բառարանները, և մեգրելական doki «кырчка», ինչպես թարգմանում էր H. Kinnikladze-ն։ Այսինքն այստեղ ևս հայոց «ի» (X) բաղաձայնը հարաբերում է առաք երազաձայնին, ինչպես այդ տեսանք սուեմբ. k (X) յոց ի (X) հնչյունների վերաբերմամբ։

¹ Այդ pal-us «գյուլ բերդիկ» (?) արմատի հետ համեմատել Արաղածուտի Փաթրիս գյուղանունը - իճ նվազական մասնիկով (զժվար թէ ստացված լինի phath+aric «գյուղ, բնակավայր» մասերից)։ Իսկ palr կամ palat ուրարտերենում նշանակել է «բաղաձայն, սկզբում երեի պարսպապատ տեղ»։ Հավանորեն Phalmz մեր գյուղը հնում պարսպ է ունեցել։ Իսկ որ գյուղերն ու բաղաձայնները կարող էին լինել «վերին» կամ «եներքին», այդ մեղ հայտնի է բոլոր հին ու նոր լեզուներից։ Լինում են նաև el-ն և Ա., Փարթ Ա., «ձին Ա.» և նոր Ա.։

նակում է «վերին» (oberer), «բարձր (ինչ) բարձրանալ (hoch sein), բայց և «երնեյ, դուրս գալ» (hervorkommen), ինչպես թարգմանում է B. Meissner-ը (Die Keilschrift, 101), համեմատել հենց սանսկր. rodhati «բարձրանում է», գոթ. Hinþan «աճել» և հուն. սրանց ազգակից eleutho «գալիս եմ» արմատների իմաստները և այլն: Արդյոք այս բոլորի մեջ չկա արևային-կոսմոգոնիական հին մտայնություն, կապված արևի բարձրանալու, ուրհմի և դուրս գալու հետ (համեմատել՝ լատ. oriens, «восход, восток» «արևելք» և նմանները և մյուս կողմից occident «запад» «աղափարները»): Այս կողմից համեմատել Ակինա բարբառի «Մանիլ» արևուն քաղթին սահմաններին մեկնել հեռանալը» և մյուս կողմից մեկնող «Մանիլ»-վար իշնալը (տես Հ. Աճ., Գալատ. բառարան, էջ 751):

16. Ե Կ Ե Ղ, Ի Ք

Այնպիսի դավառի անունը սովորաբար սեռական հոլովով է «եկի-ղևաց (գաւաւ)»։ Արմատն է ekel-i-, որը իմ կարծիքով գալիս է սեռական աշխարհից (աստերաբարեկանից) և որպես հասարակ անուն նշանակել է «ղաշտ»։ Ակկադերենում բառը հնչվում է ekl-um «champ» (—ղաշտ)։ Հայոց եկեղիք դավառ բռնում էր եփրատի վերին հոսանքի երեզ (Eriza) քաղաքի շուրջը, Դարանաղյաց դավառից հյուսիս։ Ն. Աղոնցը այսպես է նկարագրում այդ տեղերը. Дараналия занимала долину речки Кёмур, а Екелесена соседнюю равнину, орошаемую мелкими ручьями, стремящимися из гор Сиппикор, арм. Сурб-Григор, т. е. горы св. Григория, к Ефрату» (տես նրա Арм. в зап. Юст., էջ 48)։ Բայց եթե Ն. Աղոնցը շատ լավ ընդգծում է եկեղիք դավառի գաղտնային տեղագրությունը, այդ բառի ստուգաբանությունը սակայն նա շատ արվեստորեն է բացատրում ի նկատի ունենալով որ կա Որբալիսենի (Որբալիսենի) և Որբիսենի (Որբիսենի) որոնք սահմանակից էին Փոքր Հայքում, և ի նկատի ունենալով, որ Ստրաբոնը մի տեղ գրում է 'Αχι:πιγυ: φερωνιακ: սովորական 'Αχι:πιγυ: գրվածքում] οπισκει вместо Ακκίσις, обе формы следует считать по образованию аналогичными с Orbaisena и Orbisena (ibid., 56)։ Իսկ սկզբնական *Akis-ena ձևից, որն ըստ իս միանգամայն սխալ է, նա հանում է akis- արմատը, որ համեմատում է Ակե դավառի անվան հետ, որ գտնվում է Վասպուրականում (ibid.):

17. ԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐՆ

Երկ-ար, սրկ-այս բառերի erk- արմատը ես կապակցում եմ ակկ. arku «երկար» («lang», տես B. Meissner-ի մոտ, էջ 102) նույն արմատի հետ, թեպետ ակկ. k բաղաձայնը ավելի շուտ պիտի վերածվեր վերջին հաջվով հայոց «ք» (kh) բաղաձայնի։ Բայց ունինք և մի այլ օրինակ նման հնչյունական համապատասխանություն (ակկ. k—հայ k)։ Ինչպես բոլոր սեմիտների մոտ (և ակկադացիների) շուն բառը հնչվել է kalbu (=khalb-), իսկ սա վեր է ածվել մեզ մոտ «կուղր» (= ջրշուն) ձևով, փոխանակ «քուղր»։

¹ Թեթևական օրենսդրում այդ ակկ. ekl-um բառը իր վերջին մասով -lum հանձն էր կրում և որպես լրացում և տեղական բացատրում սու մերական A. ԶԱ (G). A. KAR «գալա», ազարակի բառի համար (Sku Code bibl., էջ 106 և մյուսները)։

Սխալվում են հնդեվրոպաբանները (Meillet, Հ. Աճառյան), երբ մեր erk- արմատը (երկուր, երկայն) զոռով ցանկանում են կապակցել հնդեվրոպական *devā- (= անվել) արմատի հետ (տես Արմ. բառ., II, 832—833), որը կա հայերենում tew- ձևով (ստեղծ)։ Հայ հնդեվրոպաբանների «հնչյունափոխություններ» հայ erk = հնդեվր. dw- (երկու, երկնչիւմ, երկար բառերում) միանգամայն բնագործիկ է։

18. Ը Ս Տ

Ըստ «համաձայն» (соотвѣстно, по) նախդիրը Pedersen-ի և մյուսների կողմից բացատրվել է որպես հնդեվրոպական բառ, սերված *apo-ից, որ ուսեբենով կնշանակեր «H3, C» (հմտ. հնդերան. apa, հուն. apo, գերմ. ab և այլն)։ Իսկ սրա ածանցված ձևն է եղել *(a)post, որից լիտվական pas և լատին. post «յետ, հետո» (տես Հ. Աճ., Արմ. բառ., II, 1065)։ Այս կարծիքը ես սխալ եմ համարում։ Մեր այդ əst նախդիրի ավելի հին ձևը տեսականորեն պիտի լիներ կամ *ist և կամ *ust, համաձայն մեր հնչյունափոխական օրենքների։ Իմ առաջարկն է՝ ընդունել նախնական ist ձևը և համեմատել ակկադական գրեթե նմանահունչ նախդիրի հետ, որ նույն կամ մոտիկ նշանակությունն է ունեցել, այն է՝ istu «von, aus» (= ոտուսց H3), որ գրվելով գոյականից առաջ, բառին պատճառում է բացառական հոլովի իմաստ։ A. Ungnad-ը և B. Meissner-ը այդպես են թարգմանում (von; aus)։ Ըստ իս մեր բառ նախդիրի իմաստը հնում հենց այդպես էլ եղել է, որ պահվել է մասսաբ հայցական կամ բացառական հոլովածների հետ գործածվող մի քանի դեպքերում, ինչպես ըստ գետ անցանել (= գետից անցնել), ըստ հիւսիսոյ կուսէ (= հյուսիսի կողմից) և այլն։ Իսկ այս հեռացման-անջատման ֆունկցիայից «ըստ»-ը ստանում է նոր ֆունկցիա («համաձայն»)։ Համեմատել հին վրաց khalakhitha khalakhad «ի քաղաքէ ի քաղաք» (Ավետարանում), ուր khalakhith ունի բացառական հոլովի ֆունկցիա, իսկ այժմ նշանակում է «միջոցով, ու» (khalakith «քաղաքով»)։ Միակ փոքր խոչընդոտը մեր այս ստուգաբանության (հայ əst = ակկ. ist-) հնչյունականն է, քանի որ հայերենում ավելի շուտ սպասելի էր «ըստ» (չ բաղաձայնով), համաձայն ակկադական հնչման։ Հմտ. սակայն աստի = ակկ. assat-u, խուրթ. asd- «կին» նման հնչյուններով։

19. Թ Ե Ղ

Թեղ «կամեաժ», բայց դեռ հարզը չմաքրած ցորենի դեղձ, բորձ է ածվում մի շարք բարբառներում (Բյութանիա, Երևան, Խարբերդ, Ղաղախ և այլն. տես Հ. Աճ., Գաղ. բառ., էջ 357)։ Արարատցիներիս մոտ այդ թեղը լինում է կամ երկար ու թմբաձև (Աշտարակում) և կամ նաև կլորաձև կույտի նման (Փարպիում), իսկ ցորենի կույտը կոչվում է «սեխձ», որ ձևացել է գիսսիմիլացիայով հին «շեղ»-ից։ Ոչ մի տարակույս չի կարող լինել, որ մեր հայ բարբառների այդ քնդ բառը եկել է սեմական լեզուներից։ Համեմատել ակկ. tilu «ավերակների բլուր», (Ruinen)hugel, ինչպես թարգմանում է A. Ungnad-ը (էջ 161) և կամ պարզապես «բլուր» (tilu, tillu «Hugel», ըստ B. Meissner-ի, էջ 112), արաբ. tall-un «բլուր» (خولم,

¹ Համեմատել նաև լատիներեն Ablativ-ի այդ երկու ֆունկցիաները, մեկը որպես բացառական (Separativus), մյուսը՝ գործիական (Instrumentalis)։

бугор), սյուրիական tila (id.), որից և հայոց Թիլ հատուկ գյուղանունը: Հայոց thef (թեղ) բառը հնում հնչվել է անշուշտ thil-, ինչպես ժեղոսք-ը ստացվել է Nilos-ից, «Բարսեղ»-ը Basileus-ից, «Սեղրեստրոս»-ը Silvestros-ից և այլն: Իայց թե մեր «թեղ»-ը որ սեմական լեզվից է ստացվել, այդ առ-այժմ ինձ թվում է զժվար է որոշել: Դրա մուտքը կարող էր հավասարա-չափ կերպով լինել թե Միջագետքի սեմիտներից և թե արամիական-ասու-րական լեզվից: Այս հարցը վերաբերում է նաև մի քանի այլ բառերի, ու-րոնք համարվում են հայերենում սրբիս ասորական (սյուրիական) փոխա-ռություններ:

Այդպես են, օրինակ, մեր մաշկ բառը, որը իմ կարծիքով հնչմամբ ավելի մոտ է ակեղազական masku ձևին, քան սյուր. meška, արար. mask և նմաններին, թեպետ կա և փոխառյալ պեշևիվական mask, նոր պարսկ. mask, որոնք բոլորն էլ նույն իմաստն ունեն (ըստ Habschmann-ի հայե-րենը պարսկականից է վերցված, տես Arm. Gr., էջ 311):

Այդ նույն հարցը պիտի դնել նաև հայոց փոխառյալ մաֆս բառի նկատմամբ (—աստուր. maksu, սյուր. maxsa, հրեակ. inexes, արար. maks, որը վերցված է արամեականից (ibid.), փոխառյալ կեղե բառի նկատմամբ, որը ասորականից է (= qalafā „folium libri“, qalafāša „cortex, squama, putamen mali granati“, տես Habschm., Arm. Gr., 307), թեպետ մենք ունենք և պալմոսական (սր. Աբարատում) կլեպ բառը, որը հնչմամբ ավելի մոտ է ակեղազական kalapu բային, որ նշանակում է «կլկվել» (abgeschalt werden“, տես B. Meissner-ի մոտ, էջ 110): Հայոց դալ բառը, որ նշա-նակել է որոշ ժամանակաշրջան (հազարով, հարյուրով) և սերունդ (поко-ление), մոտ է ասորական dala, „aelas, saeculum“ (հրեակ. dor) բառերին, բայց և լակկ. dala «տեականություն, մշտականություն» բառին, որոնց հետ ևս համեմատում եմ մեր պալմոսական դալ (=հերթ) բառը և վրաց dlo «ժամանակ» բառը, թողած զեռ տարի» բառի նման հնարավոր աղբյուր (ն. Մառը այս «տարին» կապում էր վրաց cell, լալ. *išari ձևերի հետ):

Այդպես նաև պրարբի և մեր արդի բարբառների մեծ անունով ծան-րաշափը (քաշը), որ Հ. Աճառյանը համարում է պարսկերենից վերցրած, ևս առաջարկում եմ համարել տեղական, որպես ուրարտերենի մնացորդ, իսկ վերջինս էլ ակեղազերենից փոխառյալ Ա. Շիրակացու մոտ մանը պարունա-կում է 44 ունկի (yHqHŋ), Շառախիում մանը կես փոթ է, Մարագայում՝ մեկ լիտր, Սալմաստում՝ հեղուկի չափ է (ևրկու շշի չափ). տես Արմ. բառ., IV, 809 և «Գալ. բառ.», 750: Որ հայոց մանը, ժանավանդ Ա. Շիրակացու մոտ, պարսկերենից չէ, այդ կարելի է պնդել այն պատճառարանությու-ններով, որ պարսկերենի մոտ man (կրվում է «սխալմամբ» manu) նշանա-կում է միայն «լիտր» և հնում չի հիշատակվում, որ Շիրակացու մոտ մանը մոտ մեկ կիլո է (= 44 ունկի), որ ուրարտերենում այդ չափը (զրվում է manae) մոտ կես կիլո էր (400 գրամ ոսկու համար, 500 գր. արծաթի հա-մար), վերցրած ակեղազական manû-ից (= 60 սիկդ): Հույներն ևս Միջա-

¹ Իմ հայրենի Աշտարակ գյուղում կեղե կոչվում է միայն ընկուզի (սպուրբի) պա-տյանը, առանց որի պուրքը կդառնա կակալ (վրաց. բառ է): Երբ այդ կանաչ կեղևով ըն-կուզը կեղևահան են անում, ասում են «կակալ անել» կամ «ծուձուկ անել» (հնչվում է, ձևացուց անել): Իսկ կլեպ կոչվում է մյուս պատուղների պատյանը (խնձորի, տանձի, չորբի, զեղծի և այլն), ինչպես և փայտի կլեպը (= κοշυρα-ն):

գիտքից վերցրին այս շափը mna, mās անունով (= 100 գրամ, Hubschm., Aram. Gr., 365), որտեղից էլ հայոց փոխառյալ «Ֆիասս»-ը՝

Վերջապես գրաքարի խոռոջ (խոռոչ) «փչակ», дуло¹ և արդի բարբառների խոռ «պատի փլված անցքը» (брем) բառերի արմատը է. Աճառյանը փոխառություն է համարում արամեականից, ուր կա xora (այսուր. xura «ծակ», աասուր. xurru, եբր. xor, xur և այլն, տես Արմ. բառ., III, 588), բայց «է»-ը աստորական (=ակկադական) ձևը ավելի մոտ է հայերենին իր երկու ռ (=rr) բաղաձայնով, որ հայերենում փոխարինվել է «ռ» կոշտ բաղաձայնով՝

20. օր և և և և և և և և

Առաջինը—մի տեսակ ծուղակ է երկու տախտակներից, որոնք թելով լարվում են (կողքերից) և ամրացվում են փայտե շրջանակի վրա. դրվում է փոսի վրա, որ որսի թուշունը (կաքավը և այլն) այդ թակարդի վրայի կուտը ուտելիս բնկնի զնպի ցածը բացվող այդ երկու տախտակների տակի փոսը, որը խկույն նորից ծածկվում է վերևից նույն տախտակներով։ Այս փոքրիկ զործիքը, որ զործ է անվում, օրինակ, Աշտարակում (ինքն անձամբ եմ պատրաստել), որսորդական բառ է, որ քիչ է այժմ զործ անվում, և իր անվամբ աղերսակցվում է անշուշտ հին ծուղակ բառի հետ (ս-ակ-ը մասնիկ է)։ Այս երկու բառերի նախնական արմատը պիտի լիներ ծալ(ա) կամ ծալ(լ)-, որոնցից մի զնպքում երկու լ (ղ) բաղաձայնները ընդմիջվում են զառ ձայնավորով (հմմտ. manna > մանանա, Manna ցեղանունը > Մանանադի...) և կամ մեկը ընկնում է (հմմտ. *Mannali > Մանադի)։ Այսինքն՝ *callak > calalak, իսկ cullak > cullak։ Հայոց այս երկու նույնածագում բառերի ell բաղաձայնական արմատը ես սերում եմ ակկադական նույն արմատից, որ հնչվել է sll (= ձլլ) և նշանակել է «ծածկել, կախույցանել, կտուրով ծածկել» (belegen; bedachen), իսկ չեզոք առումով «դրվել, պառկել (sich legen; liegen, տես A. Ungnad-ի մոտ, էջ 158), իմաստաբանական տեսակետից համեմատել կախույցանել «զոցել» և կախույց «որդայթ» (заплетя)։ Ն. Մանը իր դասախոսությունների ժամանակ, որ մասամբ մոտոս մնացել է գրավոր կերպով, ցանկանում էր հին հրեական šalal «он висел, колыхался» արմատի հետ կապակցել վրաց cappel (< *calcali) «высокий трысущийся мост»։ Անշուշտ վրաց բառը պիտի կապել հայոց «ծանծաղ, ծանծաղուտ» բառի հետ, որ նշանակել է իրոք ոռոսերենով ասած՝ трысчка։ հրեական արմատը նման ակկադականին իրոք նշանակել է «վերելից կախվել» (հմմտ. ակկադական «վերևից ծածկել, bedadien»)։

21. Կ և և և և և և և

Կաշուռ («կաշառք», ВЗЯТКА²) բառի արմատը եթե համարենք kas-, ապա այդ կարելի է ազդակցել ակկադ. kas-u «նվիրել» արմատի հետ, որից kiš-lu «նվիր» (տես A. Ungnad-ի մոտ, 146)։

¹ Ակկադական xurru բառը A. Ungnad-ը թարգմանում է «Noble» (= փչակ, տես նրա դիրքը, էջ 144), իսկ B. Meissner-ը թարգմանում է «Lodi» (= ծակ, տես նրա մոտ, էջ 105)։ Թեպետ արարերենում ես հնչվում է xurru, բայց հայերենը այստեղից հնում չէր կարող փոխառնվել։

22. Կ Ա Պ Պ Ի Տ

Կապուտ («ալար, թալան») բառը եւս համարում եմ սեմական և կապակցում եմ, որպէս փոխառութիւն, ակկադ. xbt «կապտել, թալանել» արմատի հետ (xahatu «plündern», xabtu «beraubt», xubtu «Beute, Raub», տես A. Ungnad-ի մոտ, էջ 143)։ Այստեղ հետաքրքիր է այն, որ ակկ. x (h) բաղաձայնին հայերէնում համապատասխանում է ոչ թէ «խ» կամ երբեմն «հ», այլ «կ»։ Համեմատել ակկ. xuššu — հ. խուց, puḫxu — հ. փոխ. malxazu = մալխադ, mexru = մախր, xalapu — հալաւ և այլն։ Կամ թե համեմատել ասորական (արամեական) և հայոց նման հնչյունական փոխաբարբրութիւնը—xānuḫā = խանութ, xargāla — խարագուլ, xāmīra — խմոր, xazzura = խնձոր. māxallā = մախաթ, xawla = հաղբ, xāšiw — հաշիւ և այլն։ Բարեբախտաբար մի դեպք եւս կա, երբ սեմական փոխառյալ բառի x բաղաձայնի դիմաց հայերէնը տալիս է «կ»։ այդ կացին բառի մեջ է, որը փոխառյալ է ասորականից (xāssina «dolabra, securis» = բրձ, կային), թեպետ կա և ասուր. (ակկադ.) xāssinu «կացին», արաբ. xasīn, կթուպ. xāssīn «երկաթ» (Արմ. բառ. III, 1103) և հայոց կացինը թե հնչյունորեն և թե իմաստով կարող էր զայն և Միջագետքից, անցնելով նախապէս Հայաստանի հարավային հին ժողովուրդներին։

Հայոց կապուտ («ալար») փոխառյալ բառը հետազայում, արդեն երևի դուտ հայկական հողի վրա փոխակերպվելով, իրենից դարգացնում է և մի նոր բառ կամ բառաձև նույն իմաստով. զա—կօղօպուտ բառն է։ Սկզբում kapul-ից թերևս իմաստի ուժեղացման պատճառով գոյանում է *kēlapul (*կղապուտ), այսինքն՝ առաջին բաղաձայնի և իրեն հաջորդ ձայնավորի միջև զարգանում է մի նոր բաղաձայն, որ հայերէնում, ինչպէս նմանը և այլ լեզուներում, արտահայտվում է «ր» (r), «լ» (l) կամ «ղ» (ll) ստանալով։ Այս ժամին ես գրել եմ դեռ 1927 թվին (տես «Հնեաբանական մի քանի Ձեռագրորեներ հայերէնում», տպված Գիտ. և Արվ. ինստ-ի «Տեղեկագրում», № 2), որտեղ բերված են այնպիսի օրինակներ, ինչպէս լիսյութը և ստացված *խայտաբէտ-ից (նման հաստամետ, հաստաբետ, բարձրաբերձ և նման կերկնութիւններին), «ծղօր» կամ «կլօրղի» (качели) ստացված ճորալ (շորթ-բայ) բայից. որը կա և ճորիկ, ճոր պար, ճորճոր և նմաների մեջ, սլօւր «սրածայր» (սար, գլուխ, երես, ժայռ) ստացված սուր պարզ բառից, սլլօլ կամ սլլօլօ (կրկնակի՝ պոպլոդ) սրածայր կույտ. սրածայր՝ ստացված պոլոդ (= կոտող) բառից, սլլօլկի ստացված պոկկի բայից, կլլօնձ (կլոնջ) «կղկղանքի դնդիկ» ստացված kond-ից (կոնդանալ=դուռնի դառնալ), «կլրթ» ստացված կորթ-ից, և այլն և այլն։ Ուրեմն ոչ մի տարօրինակութիւն չկա, որ հին kapul-ը դարձել է *kēlaput, իսկ վերջինս ձևակերպված է միացել միայն լիաձայնությամբ, այսինքն՝ դարձել է կողոպուտ, ինչպէս ասորերեն plalia բառը լիաձայնությամբ դարձել է պողոտայ (լի. Շնորհալու մոտ պաղատա). որը վերցված է հունարեն plateia ձևից։ Իմ վերոհիշյալ աշխատության մեջ առաջարկել էի նման ձևով բացատրել զարաբաղցոց ճղոպուր (լիաձայնությամբ՝ ճղոպուր) բառը, որ նշանակում է ընկույզ։ Այս բառի նախնական (առանց «ղ») ձևը պիտի լինի «ճոպուր», իսկ սա արեւմտյան վրացական ձևն է քարթվեկական (արեւելյան) cabli բառի, որ նշանակում է շապանակ։ Դարթվեկական cabil-ն այնպէս է հնչյունափոխությամբ և լիա-

ձայնությամբ դարձել *coburi*,¹ ինչպես *dzaγli* «շուն» > *dzoγori* (հմմտ. Աշտարակում՝ ձաղար շուն կամ զաղար շուն «փորը դետնահան փոքր շուն»), *kreba* «հավաքել» > *korobua* (հմմտ. Աշտարակի «կոռոփ» թուք = զունտ թուք), *scavla* «սովորել» > *qorap*. *sotpor-hi*, *slekha* «փաղաքել» > *qorapari* շողոք-որի՜ և այլն և այլն: Այժմ ես առաջարկում եմ զրույրարի ճապուռ «մազիլ, ճիրան» բառից, կամ ավելի շուտ դրա ճապուռ (ճուլբիլ) բայաձևից («ճանկել», «ճանկուտել»), որ զործ է անվում բարբառներում (Արմ բառ., IV, 608—609) հանել «ծղապրել» բայաձևը «փրցնել, կորզել, խել, պոկել» (ibid., 680) նշանակությամբ: Իրաբարում կար և ճուլբիլ: Ուրեմն՝ ճապուռ *resp.* ճուլբիլ զանուն է *ճղապրել, կամ *ճղուպրել, իսկ սա էլ լիաձայնությամբ՝ ճղուպրել: Ուրեմն և կապուտ (ավար) բառը այդպես դարձել է *կղապուտ (*կղուպուտ) և հետո՝ կողոպուտ: Պիտի ընդգծեմ, որ չ (= մեր «չ») հնչյունի զարգացումը բաղաձայնի և հաջորդ ձայնավորի մեջ եղել է և հին վրացերենում, եթե ընդունենք Ն. Մառի հետևյալ ստուգաբանությունները, որոնք ինձ թվում են ստույգ. դրանք են վրաց *zγapari* «сказка» = արար. *dzabar* «слово, речь, изречение», վրաց *zγua* = է. ձով [ուրարտ. *tsue*], վրաց *dzγveni* «նվեր» = է. ձոն (*dzon*), վրաց *zγvari* «սահման» = երրայեցերեն *šar* (id.) և այլն:

23. Կ Ա Ր Բ (ն.)

Կարբ(ն) «հողամաս» կամ «մարգագետին»: Մենք առաջարկում ենք ընդունել այդպիսի հասարակ անուն այդ մոտավոր նշանակությամբ մի քանի հատուկ տեղանունների մեջ, որ պահել է Սա. Օրբելյանը: Դրանք են՝ *Առաքարբ*, *Շիկակարբ* (համեմատել «Շիկահող» գյուղանունը), *Կարբ*, *Կարբիբ*, *վերիբ*, *Կարբիբ* *Օերիբ* և այլն, որոնք հիշատակվում են հին Գեղաքունի, Սոթք և Հաթանգ գավառներում: Անշուշտ Կարբի գյուղանունը (Աշտարակի մոտ), ինչպես և Վրաստանում նույն անունը՝ *Karbi* (Դորիի մոտ), ծագել են նույն հասարակ անունից, նշանակելով որոշ հողի կամ հողամասի տեսակը: Այս մասին ես գրել եմ իմ «Историко-лингвистическое значение топонимии др. Армении» զրբում, 1940 թ., էջեր 91—93: Այդտեղ բառի իմաստը ես կոհեմ եմ թե հայկական այդ բառերի կազմությունից (Ուռաքարբ, Շիկակարբ) և թե ուրարտական *karbi* կամ *garbi* բառի նման հնարավոր իմաստից, որ շատ տեղին է գալիս (կա «garabxubi» բարդությունը = հողադաշտ, կա նաև բարդ «ԿԱՐՔ karbi» ոճը որը քար ու հող, այսինքն՝ տարածություն, կալվածք): Այժմ ուրախ եմ արձանագրելու, որ նույն արմատը կա և ակկադերենում, ուր կարդում ենք՝ *kirub-u* «Land(stuck); Feld» (= հողամաս, դաշտ), *kerb-itu* (հոգն. *kerbetu*) «Flur» («մարգագետին, դաշտ, արտ», տես A. Ungnad-ի մոտ, էջ 146): Նմանը կարդում ենք և B. Meissner-ի մոտ (*kirbitu* «Feld; Flur», էջ 110): Հայոց այդ *karb(n)* կամ *karbi* ձևերը տարբերվում են ակկադերենից միայն միջին ձայնավորով, այն է՝ հայերենում «a» է, իսկ ակկադերենում՝ i կամ e, ինչպես տեսնում ենք և Աշտարակ — ակկ. *Istar*, մախր = ակկ. *merx*, սակարակ = ակկ. *šigaru*, Անզղ (- բերդ) = ակկ. *ekallu* և նման

¹ Այս իմ ստուգաբանությունը հեռացում կրկնել է Ն. Անույանը: Տես նրա Արմ. բառ., IV, 1930 թիվ, էջ 680. ես այս մասին գրել եմ 1927 թվին: Տեղեկագիր 3—4.—3

համապատասխանություններում: Պատահական նմանություն ունի մեր կար-
քի (և վրաց Karhi) գյուղատեղանք ակկ. karḫu «գյուղ» բառի հետ, որը եթե
անգնեն հայերին, ապա պետի հնչվեր «Քափրի» կամ «Քարփի»:

24. Կ Ա Ր Ի

Կարք (κρυок, уда“) ստացվել է ըստ իս ակկ. kastu-ից (կաշթ-ու), որ
նշանակում է «կեռ, կարթ» (Bogen), եթե իհարկե ակադական այս բա-
ռուհին էլ ձև հնչյունակազմությամբ նոր ձևափոխություն է հին rt-ից, ինչպես
հին Urartu-ն հետագայում հնչվում էր Uraštū (որից թերևս «Ռշտունի-ք»),
šipirtu «լուր» հնչվում էր նաև šipištu (špr «ուղարկել» բայարմատից),
kiltu «անտառ» > kistu և այլն, թեպետ կար և հակառակ հնչյունափոխա-
կան երևույթը (տես A. Ungnad-ի գրքում, էջ 9), իմ „Chetto-armeniac“
գրքում հայոց «կարթ» բառը կապակցել եմ խեթերեն katral («κρυок») բառի
հետ, որը թերևս այս ընդհանուր աղբյուրից լինի:

Այս rt > st հնչյունափոխության կապակցությամբ (հմմա. նաև մեր
բարբառների՝ մարդ մաշթ, էրթալ էշթալ...) ես կառաջադրել եմ մի այլ
ստուգաբանություն նույն հայ-ակկական կուլտուրայի աղբյուրի կապակ-
ցությամբ: Ակկադերենում կու iškāt-u (իշկաթ-ու) բառը, որ նշանակում է
«կապանք» (Fessel), եթե սու ձևափոխված համարել irkatu հին բառաձևից,
իսկ վերջինիս հիմնական իմաստը հղած լինել «երկաթե կապանք», ապա
հնչյունությամբ կապերսակցվել հայոց երկաթ բառի հետ: Աստուրաբելական
բառի ծագումը չի տրվում: Ն. Մալը իր „Яфетические элементы в язы-
ках Армении“ հետազոտական սերիայում 1011 թվին առաջարկում էր հա-
յոց erkath-ը կապակցել սլոնական škad- «կռել կոփել» (ковать) արմատի
հետ (li-skad-i «ковать», lə-skad «кованный»), ձաներէն նման škad- («հը-
կադ-») արմատի հետ նույն նշանակությամբ (me-škad-eri «окованный»),
որոնց հետ նա համեմատում էր նաև վրաց čedə, սլոն. kada «կացին»
(*skada-յից) և այլն: Եթե հաստատվի, որ ակկ. iskātu-ն իրոք եղել է «մե-
տաղե (երկաթե) կապանք», ապա մեր ստուգաբանությունը ճիշտ պիտի
համարել, ընդգրկելով և կովկասյան, այսինքն՝ վրացական լեզվախմբի վե-
րահիշյալ բառերը:

25. Կ Ա Ր Ի

Կարծր «պինդ, ամուր»։ հոգնակի՝ կարծունք, ինչպես բարձր-բար-
ձունք, փոքր-փոքունք և այլն, թեպետ կարծր բառից կա և հետագա «կար-
ծերք» հոգնակին: Ընդունելով բուն արմատը karc-, առանց վերջին «ր» (r)
հնչյունի, կամ թերևս *kacr-, որի մեջ խցկվում է մի նոր «ր» (r) հնչյուն,
ևս այդ karc- և *kacr- արմատը կհամեմատելի ակադական kašaru «կապել,
պնդացնել» արմատի հետ («binden, fest fügen ըսա B. Meissner-ի, „zu-
sammenfügen“ ըստ A. Ungnad-ի): Սլոնական այս բայի արմատն է ksr
(քծր): Իմաստաբանական տեսակետից (կապել > պնդացնել) համեմատել
հնդեվրոպական *bhind- «կապել» և հայոց «պինդ» նույն արմատների իմաս-
տը և կամ ակկ. salimu («Bund») և մեր «սեղմ» (< *silm) նույնարմատ
բառերի իմաստը և այլն: Ակկադական և բաղաձայնը վեր է ածվում հայ
փոխառություններում «ց» հնչյունի, ինչպես այդ տեսնում ենք ցւց, ցիւղ,
խուց և այլ բառերում, թեպետ չի բացասվում նրա վերածվելը և հայոց

«ծ» հնչյունն, որ սովորական է ասորականից (արամեականից) փոխառնված բառերում, ինչպես ասոր. ܣܕܣܠܐ=հ. ծնծղայ, ասոր. ܣܕܡܐ—հ. ծոմ, ասոր. ܣܕܪܐ=հ. ծրար, ասոր. ܡܣܪܝܝܢܐ=հ. մծղնեսյ-ք, ասոր. ܢܫܪܝܐ=հ. նածրացի և այլն։ Ասորական (արամեական) ֆղաոնում է նաև հայոց «ց», ինչպես տեսնում ենք ܣܕܫܐ „clavus“=հ. ցից, ասոր. ܫܕܫܝܢܐ=հ. կացին և նման դեպքերում, որ ավելի քիչ է պատահում։ Այս բոլոր նկատառումներով կարելի է ըստ իս հայոց «կարծ-ը» բառի արմատը կապակցել ակկ. kašar-«պինդ կապել» բայի հետ։ Միակ փոքրիկ առարկությունը կարելի է ընդունել այն, որ հայերենում, փոխառություն դեպքում, սպասելի էր ավելի շուտ «քարծր», քանի որ ակկադերեն K բաղաձայնը ասպիրատի բնույթ է կրել (հակառակ պարզ k բաղաձայնի)։ Բայց այստեղ եղել է ոչ անմիջական փոխառություն, եթե չխոսենք նաև այդ kašr արմատի հնարավոր ներկայություն մասին, որպես բնիկ բառարմատի, Հայաստանի նախահայկական լեզուներում։ Համենայն դեպս ունենք նման և այլ համապատասխանություն (ակկ. «k» հայոց «կ»), ինչպես ակկ. և ընդհանուր սեմական kalbu (—khalbu) «շուն»=հայոց «կուղր» (=ջրշուն) ակկ. arku=հ. երկար (երկայն)։

Հնդեվրոպաբանները, ինչպես Schiefelovitz-ը և Pedersen-ը, որոնց միտնում է և Հ. Աճառյանը, այդ հայոց «կարծը» բառի karc- արմատը համարում են հնդեվրոպական լեզուներից սերված, այն է՝ նախալեզվյան *gʷergʷ, արմատից, որից են իբր թե հունարեն gorgos «ուժգին, զարհուրելի, սաստիկ, վայրենի», հին իրանդերեն gair, gairg «կոշտ, բիրտ, վայրենի», միջին բարձր գերմ. karc «ուժեղ, բիրտ», որոնց վրա ոմանք ավելացնում են լեհական groza «վախ, սարսափ, սոսկում», ռուսաց гроза «երկյուղ, սարսափ, արհալիրք, սպառնալիք, փոթորիկ» և այլն (տես Հ. Աճ. Արժ. բառ., III, էջեր 1076—1077)։ Ըստ իս հայոց կարծը բառը իր «ամուր, տեղ-անի» իմաստով ավելի հեռու է հնդեվր. բառերից իրենց հիմնական «ուժ-դին, բիրտ, սարսափելի» իմաստով, քան սեմական (ակկադական) բառից, որի իմաստն է «ամուր կպցնել, միացնել»։

26. Կ Բ Ա Կ

Կրակ («огонь») բառը ըստ Fr. Müller-ի և S. Bugge-ի իբրև թե եղել է *kurak (*կուրակ) և հնդեվրոպական ծագումով է, ի նկատի առնելով գոթ. hauri «ածուխ», հին իսլանդ. hyrr «կրակ», լիտովական kur-ti «վառել», սլավ. kuriti («курить»), եթե չհաշվենք և սանսկր. kuḍayati (տես Hübschm. Arm. Gr., 462)։ Բայց հենց ինքը Հյուբշմանը այս ստուգաբանությունը հարցականի տակ էր դնում, իսկ Հ. Աճառյանը չի էլ մըտա-ցրել հնդեվրոպական ծագում ունեցող «բնիկ հայ բառերի» գտնվում (տես նրա «Հայոց լեզվի պատմությունը»)։ Ինչ խոսք, որ կրակ բառի վերոհիշյալ ստուգաբանությունը բռնադրոսիկ է, նախ, հայոց kər-ak ձևը կարող էր հնում լինել և kir-ak, որովհետև շեշտի փոխադրման հետևանքով «ը» ձայնավորի են վերածվում թե «u» (ու) և թե «i» (ի) ձայնավորները։ Երկրորդ, վրաց փոխառությունները, այն է՝ keraki, kerakani «օջախ, վառարան» բացարձակ կերպով խոսում են հօգուտ հայկական հին *kirak ձևի և ոչ թե *kurak ձևի։ Եվ վերջապես մեր ստուգաբանությունը, այն է՝ կապել kirak (—կրակ) հին բառաձևը ակկ. Gira «կրակի աստված, կրակ» («Feuergott; Feuer», տես B. Meissner-ի մաս, էջ 104) բառի հետ, միանգամայն ժըխ-

տում է Müller-ի և Bugge-ի վերոհիշյալ տեսակետը։ A. Ungnad-ը (էջ 143) տալիս է gırr-u «կրակ» ձևը, բայց իհարկե նախնականն է gira ձևը։ Հետաքրքրական է, որ այս դեպքում ունինք ակկ. g=հայոց k, ինչպես gıšrinu=կշիռ, ասոր. gazar-la—հայոց կղզի, արամ. gır=հայոց կիր և նման դեպքերում։

27. ḥ u z - Ի ḥ

Ճառ-իմ կամ ճառ-իմ «60.100», որոնց բուն արմատն է ḥax-, որ կա նաև ճախճախուտ (՝ ճախճոտ) կրկնակիի մեջ։ Հայոց այս արմատը ես կապակցում եմ ակկադական zah-u (zah-u) բառի հետ, որը թեպետ չեն թարգմանում, բայց ըստ իս նույն իմաստը պիտի ունենա (=60.100, ճախճ), դատելով կոնտեքստից։ Բողաղքոյ գյուղում (=հին Hattusa) գտնված ակկադական լեզվով գրված քաղաքական վավերագրերում, որ կաղմված է խեթական թագավոր Եուպիլուլիումա և միտանյան թագավոր Մատիուադայի միջև, կարդում ենք անեծքի մասում հետևյալը. «Եվ ով որ հախատի քաղաքի kurinnu-ի (=տաճարի) տեր Տեուպի առջևի այս տախտակը փոխե և մի այլ գաղտնի անդ դնե, կամ կոտորե կամ տախտակի բովանդակության բառերը փոփոխե, այս դաշնագրի հիման վրա կոչ ենք անում գաղտնիքի աստվածներին և այն աստվածներին, որոնք երգումի տերերն են [Թվարվկում են թե խեթական և թե խուրրիական աստվածները], նրանք թող դաշնագրի այս խոսքերի հիման վրա առաջ դան, նրանք թող հասկանան և թող վկաներ լինեն, եթե դու Մատիուադա և դուք խուրրի մարդիկ չպահեք այս դաշնագրի խոսքերը... թող աստվածները, երկրի տերերը, ձեզ ոչնչացնեն, ինչպես մի գարու հատիկ իր ծիրով թող ձեզ քաղեն... թող և զեզի պես քեզ ջախջախեն երկրիդ հետ միասին, քո անունը... ե սերմը ջնջեն։ Երկիրդ թող սառնամանիքի օթևան լինի և դուք արմատախիլ լինեք։ Ձեր երկրի հողը թող իսկական մի zahū լինի, որը փակված է։ դուք նրանում ընկզմվեք և այլևս դուք չգաք...»¹։ Ինչ խոսք, որ այս zah- արմատով բառը նշանակել է ճախճ, որը փակված է, որի մեջ ընկղմվում են և այլևս դուք չեն զախճ, ինչպես ասում է արձանագրությունը։ Վրացերենում ևս կար ճառ- (ճախ-) արմատը, ինչպես ցույց է տալիս ճառbi (ճառրի) «ճախճ» նշանակությամբ բառը։ Ի միջի այլոց խեթերենից հայոց լեզուն մտած բառերի մեջ ևս չ բաղաձայնը վերարտադրվում է հայոց ճ (ճ) բաղաձայնով, ինչպես օրինակ խեթ. zawall «հրեշ աստվածը»—հայոց ճիւղաղ ճlwal (чудовище) և նման դեպքերում։

28. Ի Լ և Լ Ի

Մախր կամ մաքի «եղոտ փայտ» (Առձ. բառ.) համապատասխանում է ըստ իս ակկ. mexru բառին, որը մի տեսակ ծառ է նշանակել («eine Baumart», տես A. Ungnad-ի մոտ, էջ 149)։ Ի միջի այլոց քրդերն ևս պահել են այս բառը «եղևի» իմաստով, օրինակ բրուկյի կամ խասիկյի քրդերը (marx), ջալացիները (marx) և այլն։ Կա նաև պարսկերենում, արաբերենում (marx), նշանակելով մի տեսակ յուղոտ և հեշտ վառվող ծառ։ Լ. Առձայանը իր Արմ. բառ.-ում (IV, էջ 919) հայոց «մարխ» ծառանունը համարում

¹ Տես Ա. Խաչատրյան, — Հայաստանի սեպագիր շրջանի պատմություն, էջ 407։

է իրանականից փոխառյալ, երևի այն կապակցությամբ, որ նրան հայանի չէր ակկադական mexr ծառի անունը: Պիտի ելնել իհարկե ավելի հին «մախ» ձևից, որ ավելի մոտ է ակկադական mexr-ին, որովհետև $xr > rx$ մետաթեզը հայկական ուշ շրջանի հնչյունափոխական երևույթ է, իսկ բառամիջի ակկ. $e =$ հայոց a հնչյունական համապատասխանությունը մասին մենք մատնանիշ ենք արել և այլ դեպքերում (տես վերը, էջ 33):

27. Ն. Ա. Ր

Նալ, «ջրահարս», нимфа, русалка: Այս հասարակ անունն եմ տեսնում Նովիցար, Հեղինար, Ոսկինար և Նուրին բառերի կազմության մեջ: Ծովինարը ակկադական անուն կրող Սանասար և Իադդասար դյուցազունների մայրն է մեր ժողովրդական էպոսում, որտեղ նա կապակցվում է ծովի հեա, աղբյուրի ջրից է խմում, հղիանում: Էպոսի վարիաններում անունը փոխարինվում է նույն կամ նման բովանդակություներ ունեցող Նովիալ բառաձևով, ուր վերջին -al մասը առանձին բառ է, նման par-ին և հայերի, վրացիների ու իրանյիների մոտ նշանակել է «չար ոգու մի տեսակ» կամ «ոգի» և հայերից անցել է Կապաղոկիայի հույներին ales ձևով, որ նշանակել է «ծնընդկան կանանց և նորածին մանուկներին վնասող մի չար ոգի», կամ alus «մութ գիշերները, թափառող և մարդկանց վնասող մի չար ոգի»: անցել է նաև ուտիացոյ, ուր hal նշանակում է «ալք», քաջք» (տես Հ. Աճ., Արմ. բառ., VII, 75): Թերևս այդ al-ը տեղ-տեղ նշանակել է սոսկ «ոգի» և ոչ թե «չար ոգի» (=դեմ), որովհետև անհարմար կլիներ դյուցազունների մորը տալ «ծովի դեմ» (=Ծովինար) անունը. իսկ այլուր այդ վատ առումի հետևանքով փոխարինվել է par-ով (=Ծովինար): Այս երկու բառերն էլ, այսինքն՝ թե Ծովինարը և թե Ծովիալը գործ են ածվում և որպես հասարակ անուններ, նշանակելով ծովից ծագող կայծակը, ինչպես այդ աեսնում ենք Շուլավիրում: Ղազարում և Լոռիում. այս առումով ծովիալը դարձել է «Ծովիան», իսկ Ծովինարը այլ բարբառներում մնացել է որպես հասուն կանուն կնոջ համար: Հեղինար բառը չպիտի կապել Հեղինէի հետ, այլ պարզապես նշանակել է «ջրի (հեղուկի) ոգի», որի «եղ-» արմատը կա հեղեղ, հեղուլ, գեղուլ (<դհեղուլ): հեղուկ բառերի մեջ: Ոսկինարի կազմությունը ավելի պարզ է (ЗОЛОТАЯ НИМФА), իսկ Նուրինը փոփոխություներ է հին parin ձևի (=par-ին պաականող, par-ից ծագող) երդի մեջ եղած հետևյալ հուրին բառի ձևական նմանողությամբ (Նուրին, Նուրին եկել ա, աջրա հուրին եկել ա): Նուրինը, ինչպես պիտենք, աղճկա խրտվիլակ է, որ երաշտի մամանակ ման են ածում, վրան ջուր թափում ելն, որ անձրև գա: Ես մի այլ աշխատության մեջ առաջադրել եմ մեր այս par բառը սերել խեթական para աստվածանունից, որը թերևս անցել է և հույներին Nereus ծովի աստվածության դիմակի տակ (տես Хеттские боги у армян, էջեր 42—48), բայց սովելի հավանական է այժմ ինձ թվում հայերենի անմիջական աղբյուրը համարել ակկադական paru «գետ, գետային ոգի» բառը: Վերջինս, ուրեմն, փոխանցել է Միջագետքից հյուսիս, մտնելով հայոց լեզուն, մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ «Մասմա ծոերում» ավելի լավ է պահվել Ծովինարի կերպարը, որպես «ջրահարս», իսկ մեր այս հարավի հայերը (խոթեցիք-սասունցիք և այլն) մեծ մասամբ կիսասեմական կամ նայիրյան-սուրարյանցեղերից են: Nār- բառարմատը սեմական ուի արմատից է

(հմմտ. Naharina «գեհալին շրջան» = Nairi), անցել է նաև արևելք, Հընդ-կաստան, ուր nara նշանակել է մի տեսակ ջրային ուղի, դանդաղաբերի մի տեսակը, Համեմատել նաև մոնղոլական ոог «լիճ» բառը (Կուկու նոր, Խենգրի նոր, Դալայ նոր), Ռուսաստանում Hapa անունով գետերը, Hepo՝ լճակը և այլն:

28. ց ւ ր ճ

Օերտ *«կտրած փայտակտոր, ԸՂՈՒ, ցանկապատի ցից, տապար, կացին»*. շերտել *«շերտ շերտ գծել, ջարդել, ճեղքել»*, շերտակտոր կամ (շերդակտոր) առնել *«տապարով ջարդել, կտրատել»*, շերտափակ *«ցիցերով փակած»*, շերտաւոր *«տապարովոր զինվոր»*, Արմատի հիմնական իմաստն է ըստ իս «ճեղքել, рассекать», որը կա և սեմական լեզուներում: Համեմատել ասուրական (բաբելական) šaraṭu, ևրբ. šrē «սլաակել, ճեղքել», ասոր. šarai «պատահողություն, արարքեր, sari «մարմինը շառտել» (Այս վերջինից է շառտել «ածելիով մարմինը ճեղքողություն», որ կա և Ալաշկերտի բարբառում, տես Արմ. բառ., V, էջ 282): Իսկ հայոց շերտ բառի տառարար (կամ ցից), նշանակութունը այնպես է ստացվել *«կտրել, ճեղքել»* գաղափարից, ինչպես լատ. seco «cekv» բայից ունինք սակուր «cekura» կամ ավելի լավ՝ ասսուրաբար. paṣaru «պատռել, ճեղքել» բայից կա նույն լեզվում paṣru «գաշույն» իթե ընդունենք նաև որ հայոց ri (ri) կարող է դառնալ šl, ինչպես ունենք կորդ և կոշտ, կամ հետագա բարբառներում մարդ մաշթ, էրթալ / էշթալ ևն, ապա հին «շերտ»-ը կհնչվեր շեշտ, որ նշանակում է սուր կերպով, զեպուդիդ (отвечо), շեշտել *«սուր ձևով կտրել»*, շեշտումն (Մասսի ձորերի մասին) *«կտրված վիճակը»* և այլն: Այստեղ ևս ամենուրեք հիմնական նշանակութունն է *«սուր կերպով կտրել»*, իսկ այլաբանորեն շեշտել *«սուր հնչել»* նման է ոռուսաց режет слух՝ կամ շեշտ «ударение» էլի դալիս է սրության (կտրելու) գաղափարից: Ուրարտերենում ևս կան šerd- բայարմատը և šeši-ili (հոգն. հայց.) գոյականը: Առաջինը հաճախ է գործածվում Եսենեքի ֆորմուլայում, երբ կարդում ենք—*«ով այս արձանագրությունը (քարը) ջարդե... ով šerdulie»* և այլն. անշուշտ այդ բառը նշանակում է *«ճեղքել, պատռել»* (-ulie ապառնի 3 դեմքի թեքում է), իսկ ուրարտերեն šeši գոյականի նշանակությունը, որ բնագրերում մի անգամ է գործածվում (Մենուան խաղղյան «շեշտ»-ը շինել տվեց), դեռ որոշ չի¹:

¹ Այս վերջին արձանագրությունը, որ գտնվում է Տփղիսում և բերված է Վանի մոտի Թուրան գյուղից, չորս առկի է, գրված բարի երկու կողմերի վրա և ընթացիկ կեղծիք կամ կոնարափակցիա չէ, ինչպես Գ. Մերեթիին է հավանորեն կարծում: Բնագիրն է.— dXal-di-ni-ni us-tua-a-ši-ni Me-i-nu-u-a-še dXal-di-i-ni-li še-iš-ti-li šl-i-i-di-i-š-tu-a-li=խաղղյան փառքով (=հանուն խաղղյան փառքի) Մենուան խաղղյան շեշտերը կառուցեց (=շինեց, շինել տվեց): Իսկ šerd- «ճեղքել» գործ է ածվել Զիվինի Մենուայի արձանագրության մեջ՝ aluse ini DUB IE tulie, aluše pitulie, aluše, šerdulie... (սխալ է te-ir-du-lije], որ վերծանում է Գ. Մերեթիին, տես նրա Урагг. памятники мурет Грзани, 1930, էջ 44): Այդպես է նաև Սարգուրի արձանագրության մեջ Իզուդուի մոտ, կամ Մենուայի արձանագրության մեջ Գողթանց գյուղից (aluše esimie siui-dulie, aluše šerdulie...), որը անունում ենք նույնությամբ և Մենուայի մի արձանագրության մեջ Վանում (Գողթ-Պեարոս եկեղեցում): Նմանապես šerd-ulie (ճեղքել, рассекет) տալիս է Սարգուրի մի արձանագրությունը Արմավրից, որ հրատարակեց առանձին Ս. Նիկոլսկին: Այսպեղի շարագրությունը նման է Մենուայի Զիվինի կամ Սարգուրի Իզուդուի արձանագրությունների ձևին (aluše ini DUB. IE tulie, aluše, pitulie, aluše šerdulie=ով այս արձանագրությունը ջարդի, որ փշա-

29. Պ Ա Տ Ա Ռ Ե Լ

Պատահել «պատռել, ճզել կտոր-կտոր անել» միանգամայն համապատասխանում է ակկ. paṭar-ս բային նույն իմաստով «հեղքել, հերձել» (spalten) կամ «արձակել» (losen)։ Այս ստուգաբանությունը տվել են նաև Բ. Նալաթյանցը (Բանասեր, 1902 թ., էջ 116) և Karst-ը (Յուշարձան, 400), որ ես քաղում եմ Հ. Աճառյանի «Արմ. բառարանից» (V, 881—883) և որին ես նախապես անտեղյակ եմ եղել։

30. Ս Ա Կ Ա Ր Ա

Սակարակ նշանակում է արարաւոյան բարբառում «տկի պորտին և նստատեղին ամրացրած բոլորակ փայտը» (Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 552), իսկ Շիրակի բարբառում՝ «փայտի կուժին ծակված տեղը զոցելու համար իբրև կարկատան կպցրած փայտի կտոր» (տես Հ. Աճառյան, Պալատ. բառարան, էջ 951)։ Այս sakarak բառը հիմնականորեն նշանակել է «փայտի խցան, փակիչ» (= запор), որը թր sakar- նախնական բնով ծաղկել է ըստ իս Միջագետքից, ուր կար. skr արմատը «զոցել, խցել, ամրարտակով փակել» իմաստով («versperren, abdammen» տես A. Ungnad-ի մոտ, էջ 157), իսկ այստեղից էլ կաղավիղ է sikkuru «փակիչ, նիզ, запор» (Riegel) զոյականը, որ վերաբերում է դուռն փականքին։

31. Ս Ա Ո Ւ Ր

Սխուր «վարձ, վարձատրություն»։ Գործ է ածվում մի քանի կապակցություններում կամ ածանցյալ կաղավիղներում, ինչպես «շան սխուր» (= պոռնիկին տված վարձը), անսխուր «անվարձ», անսխուրան «անվարձ, անփոխարին» (ըստ «Արմ. բառ»-ի), «գլխահարկ» (ըստ Հ. Մանուկյանի)։ Հայոց sxur-ը ես հանում եմ ավելի հին suxur-ից, որը նույն իմաստով զոյություն է ունեցել ակկադերենում։ Այս բառը գործ է ածվել, օրինակ, խեթական արձանագրություններում, որպես ակկադական փոխառություն, ինչպես—SAL. suxur LAL «կին վարձի քաղցր» (պոռնկուհի, հիերոգլի)։ Վրացիք նույնպես փոխ են առել այս սեմական բառը, բայց saxur ձևով, որ ևս տեսնում եմ m-saxur-ի ծագում, ծառայող բառի մեջ, որ հիմնականորեն հնում նշանակել է «վարձկան, վարձու ուղիատող. наем-ник»։ Հ. Աճառյանը իր «Արմ. բառ»-ում (VI, 268) հայոց «սխուր»-ը նույնպես համարել է փոխառյալ, բայց ինչ որ արամեական-ասորական բարբառից, որը այդ sxur-ը չի պահել, բայց կան, օրինակ, երբ. sekher (sakhar) «վարձ, քահանային կամ պործավորին վճարած դրամը», արաբ. sakara «մըշակ», իսպ. šgor (škar) «վարձուհի», եթովպ. sakur «վարձված»։ Ըստ իս հայոց sxur-ը, ստացվելով suxur-իս, հնչյունաբանորեն անմիջապես կապվում է ակկադական suxur-ի հետ, որ գործ է ածվել և խեթական բնագրերում։ Իսկ վրաց m-saxur-ի բառի իմաստի և կաղավիղյան համար համեմատել արարական նույնաձայնում mu-saxhar «принужденный работать, подчиненный» (տես այս բառը В. Гиргас-ի բառարանում «Словарь к арабс. хрестоматии и корану», Казань, 1881 г., էջ 353)։

Չէ՞ (?!), ով ճեղքել, Ք. Մերեթելին Չիվինի արձանագրության հրատարակության մեջ չփոխել է ուրբա. se և se նշանները, որ որոշ չափով հման են։

32. Ս Ե Ղ ԻՐ

Սեղմ՝ «կարծր, պինդ», սեղմ-ևւմ՝ «սխմել, ամրացնել, միացնել» (Առձ. բառ.) = ակկ. salimu «միություն, դաշն» (Bund), նախնական «միացած» > ամուր, պինդ՝ իմաստաշղուծր տեսանք և կարծր բառի ծագման դեպքում:

33. Յ Ա Ս Տ Ե Լ

Յայտել և ցայթել նշանակել է հեղուկի (ջրի, արյան...) կամ լույսի ցատկելը («исторгать»); Կան և ցաթել, ցեթել (ցէթել) նոր ձևերը: Սրա caith- («ցայթ-») արմատը եւ կապակցում եւ՝ ակկադական sit-u «Ausgang» (исход, զուրս գալը, ելքը) բառի հետ, որի հոգնակին լինում է sati «Ausgänge (der Zeit)», որ փոխարեքարար ասվում է «հեռավոր ապագայի» նկատմամբ («ferne Zukunft», տես В. Meissner-ի ժոտ, 109), ինչպես ոռոսերենով կասեինք «истечение времени»: Հայ բարբառները ունեն ցաթ- բայտրմատը (Սեր-, Պոլ-, Ասլ-) կամ ծաթ- ձևը (Պոլ-, Ջեյթ-, Սվեդիա, Ակն, Պարբ-), որը զործ է ածել և Կոստ. Երզնկացին բայտի ծագելու կամ ցոլալու իմաստով (Արմ. բառ. VI, 1047): Արարատյան բարբառը տալիս է ցէթել «միզել», որ ծագում է ցայթ- հին ձևից, որը վերոհիշյալ բարբառներում հընչվում է ցաթ- ձևով: Ուրեմն մեծ մասամբ տրվում է լծայթ-՝ կամ «ցայթ-», իսկ ավելի քիչ «ցայտ-» արմատաձևը: Ակկադական sit-u-ն հայերենում պիտի տար իր սկզբի «s» հնչյունով ծայթ- և ցայթ-, իսկ «l» բաղաձայնով խոսում է հօգուտ «թ» բաղաձայնի: Ինչ վերաբերում է ակկ. i- հայոց ay (այ) համապատասխանության, ապա պիտի ասել որ նման դեպք եւ տեսնում եմ և հայոց խայթ-ել (УЖАЛИТЬ) բայարմատի մեջ, որո կա և ակկադերենում՝ xiltu (xilt'u) «մեղք, հանցանք», թեպետ հայերենը ունի և խիթ-ք «ցավ» պարզ i ձայնավորով: Իմաստաբանորեն համեմատել «խղճի խայթ» (угрызение совести) և ակկ. «մեղք, հանցանք» նշանակությունը, որ ունի այդ xiltu բառը: Եվ այս կապակցությամբ ի զուր Էր հնդեվրոպաբան Scheif-telovitz-ը հայոց xaitlu- արմատը հանում հնդեվրոպական երևակայեալ khait արմատից, որ նա տեսնում էր սանսկր. khid- (khed-) արմատի մեջ «նեղել, ճնշել» և լատ. caedo «կտրել, ծեծել, սպանել» բայերի մեջ: Այս միտքը կրկնում է և Ն. Աճառյանը (Արմ. բառ., III, 355): Հայերենը թե հնչյունաբանորեն և թե իմաստով ավելի մոտ է սեմական (ակկադական) բառին, քան սանսկրիտին կամ լատինեզներին:

34. Յ Ի Ր Դ

Յիրդ, որից՝ ցրդի, ցրդենի—մի տեսակ դիհի, թուրք.՝ արտըջ, լատ. iuniperus sativa, iuniperus macrocarpa կամ iuniperus oxycedrus (Արմ. բառ. VI, 1072): Կա և մեր բարբառներում (Ակն, Պարբերդ, Արար-կիր, Սերաստիա, ուր հնչվում է «ցրդի», իսկ Ղարաբաղում և Գանձակում՝ ցրդնի և այլն, ibid.): Մեր այս cird- անունով ծառը (թուփը) կա և ակկադերենում (ասուրերենում), որ եւ գտնում եմ Fr. Hrozny-ի հրատարակած մի աշխատության մեջ (Bogh. St. III, էջ 71, ծան. 10):— «sit-ir-lum ist in den Boghazkoi-Texten ein in Garten wachsender Baum, dessen Öl nicht selten erwähnt wird; es dürfte somit der Ölbaum sein. Man

beachte, dass bei den Assyriern der Ölbaum sirdu geheissen zu haben scheint (S. Meissner, Assyriol. Studien, V. S. 19)» Այս ենթադրությամբ *ասսուր*, sirdu-ն դառնում է ձիթենի, որ անշուշտ սխալ է: Հայոց ցիրդը (ցրդի, ցրդենի) նույնպես յուզոտ ծառ է նման ասորականին: Հայերենում սովորաբար «ցիրդ» է հնչվել, բայց դրվել է նաև «ցուրդ» (Արմ. բոռ. VI, 1072): Այս կապակցությամբ ևս յոռաջարկում եմ վրաց Ցուրտալ (Curtaw) քաղաքի անունը մեկնաբանել որպես «ցրդուտ», այսինքն՝ ցրդիներով տնկված տեղ, ինչպես մենք ունինք Թեղուտ, Ուտուտ և այլն: Իսկ «aw մասնիկի մասին հմմտ. տեղանուններ—Չիրաւ, Սուկաւ, Պարտաւ, Կճաւ, Մրաւ և այլն, (տես նաև իմ «Ист.-линг. знач. топон. др. Арм., էջ 110),

35. Գ Ո Խ Ք

Խուֆ «փշոտ զավազան ձեծելու համար», որ ևս համեմատում եմ ակկ. kakku «դենք» (Waffe) բառի հետ: Այս համեմատության մեջ այն վերապահումը միայն պիտի լինի, որ մեր քուբը սկզբում նշանակել է ընդ-հանրապես դենք, իսկ հետո դարձել է ղենքի մի տեսակ: Չայնավորների տարբերությամբ համար (ակկ. a=հայոց u) համեմատել ընդհանուր սեռական (և ակկադական) kalb- «շուն» բառը և մեր կուղը (kullb) «ջրշուն», որը նույնպես փոխառյալ է (Արմ. բառ., III, 1399):

Վերջացնելով հայերենի ակկադական (ասորաբաբելոնական) բառերի քննությունը, թե այն բառերի, որ մինչև հիմա տրված են եղել, և թե այն երեք տասնյակ նոր բառերի, որ մենք ենք այստեղ մեջ բերել, ընդհանրապես այն պիտի շեշտել, որ պրաբարը և մեր այժմյան բարբառները (մանավանդ՝ հարավայինները) անշուշտ ավելի շատ բառեր վերցրած պիտի լինեն Միջագետքից, քան հնարավոր է լինում այժմ այդ բոլորը հայտնաբերել, մանավանդ որ ակկադերենի գրավոր ձուլումներում էլ գրանք չեն վկայված, առկա չեն: Երբեմն նկատվում են հայ-ակկադական լեզուների ընդհանուր հանդիպումներ, որ որոշ վերապահումներ և կամ առարկություններ են վերցնում թե հնչյունաբանորեն և թե իմաստի տեսակետից: Այդպես են, օրինակ, շառափ(ն) «լույս, փայլ» և ակկ. šarāpu «վառել» (և արար. šarāf «շքեղություն»)¹ Կամ թե մեր աստված ասորական հարում է ըստ իս հին պարսկ. adana (=ատեան, присуетване) նույն բառին, բայց սա էլ անշուշտ ծագում է ակկ. (սեմակ.) dinu «խրավունք, դատ, դատաստան» բառից (Prozess, Recht, Gericht), որից daianu «դատավոր» (համեմատել հին պարսկ. daena (=dēna) «հավատ», «կրոն» (dēna mazdaianasna «մտղայական կրոն»)²: Արդյոք, ակկադական ծագումով չէ՞ մեր փաթախ բառը, որ նշանակում է «զոմ», բայց և «խլեան, վանք, եկեղեցի», որ շատ նման է ակկ. parakku «աստվածների հանգստատեղի» բառին («Gottergemach, Thron saal», տես A. Ungnad-ի մոտ, էջ 158), Այդ-

¹ Տես B. Meissner, Die Keilschrift, էջ 112 (šarāpu «verbrennen»):

² Խր. Բարթոլոմեի հին իրաներենի բառարանում քերվում է օրինակ միայն Ավեստայից (նրա «գաթ-երից»՝ որհերգերից) — «aw. adana- Heimzahlung, Vergeltung» (beim letzten Gerichte), ai [հին հնդկ.] adana- «emfängen», Իրանական այդ փոխառյալ բառի միջին երկար a ձայնավորը հայերենում դարձել է «ա» (ea). ինչպես սաին (սեռ. հ. ստե-սն) — ավեստ. istāna, նոր պարսկ. pistān և կամ ինչպես հայոց յաւիտեան — միջին պարսկ. ān, նոր պարսկ. javedān:

պես նման են նաև մեր *erd-* արմատը հրդեհում (հրդեհայ) բայի մեջ և ակկ. *irritu* նույն նշանակությամբ (*Beschworung*) բառը կամ թի վերջնինք մեր ասպատ գին, շին տեղ՝ բառը, որից անասպատ սա համարվում է իրաներենից վերցված, ուր շատ ասարածված է մտնելով շատ տեղանունների մեջ (Սարգարաբադ, Հայդարաբադ...): Բայց իրանյան *apat* հին ձևը իրեն հերթին շատ նման է նշում ակկ. *antu* «բնակաանգ» բառին, որը A. Ungnad-ը թարգմանում է „Behausung, (Tauben)schlage“ (էջ 189): Այս կապակցությամբ ուրարտ. *aplini* բառը, որ տեղանունների հետ է դրվում և իմ կողմից թարգմանվել է «պաականոց, հպստակ» (հմմտ. խեթ. *hapatia* = հպատակ, կամ արար. *abd* «սարուկ») այժմ թիրևս վերանայվի և թարգմանվի «բնակատեղի, կալվածք» (?): Արդյոք, պատահական է վանեցիների կամ մոկացիների վոչիկ «հասարակ (բոխ) գյուղացի» բառի նմանությունը ակկ. *irrisu* «գյուղացի» (*Bauer*) բառի հետ, կամ թի մեր գետրիճա բառի նմանությունը ակկ. *kuradu* «խիդախ, հերոս» բառի հետ:

Այսպես իհարկե շատ դիպքեր կարող են լինել, ինչպես, օգտը վերջով *Muss-Arnoldi-ի* բառարանից („Assyrisches Handwörterbuch“), բերում է նմանապես մի քանի համեմատություններ, համարելով «պատահական նմանություններ»։ Իրանք են— 1) *պեկչիմ* (պակ-նում) «վախենում եմ» և *ասուր.* *paku* «վախ, վախենալ»։ 2) *տակում* «գինու կարստ», զավառական տաքար (<*տաղար-ից) «խաղողի կնճեռի մեծ գուր» (վրաց *tagari* «տաշտ խաղողի քաղցուի համար») ասուր. *dikaru* (*dikaru*) «հոգե աման, աման, պուտուկ, բութակ» (Արմ. բառ., VII, 185), որից էլ *թա* իս պարսկ. *thazar* «կում, սպիրտ», իսկ այստեղից էլ թաթարական և հետագայ հայ թաղար-ը տարբեր իմաստներով— չաղաթ, *thaqar* «աման, պարկ», հայոց թաղար «խեցեղեն դոգալոր կամ կոնքավոր աման», հետո նաև՝ նարկ, տուրք (ինչպես՝ եղին թաղար, կտլի թաղար...), վրաց *thazar* «կում, մի անասկ չափ» (6՝, «փթանոց»), անցնելով թուրքերին, թուրքերին, սուսներին (*тарар*) և այլն (Արմ. բառ., II, 1108—1109): 3) *Սամբ* «եղիզ, եղիցնուտ» ասուր. *sam(m)u* «բույս, խոտ, տունկ» (Արմ. բառ., VII, 173): 4) *Տապալ* «ճանկ, մաղիլ» = ասուր. *šupru* (*šupparu*), երբայեց. *sipporen*, ասուր. *terpa*, արար. *zufur* և այլն (*ibid.*, 162): 5) *ար* «պատ» = ասուր. *aradum* «պատ, պատնեհ», բայց և «բարան» (*ibid.*, 175): Այս վերջինը իրոք կարող է պատահական նմանություն լինել, բայց նախորդները ևս համարում եմ ճիշտ համեմատություններ² ևս հարց կգնի

¹ Ըստ Հ. Աճառյանի «Փափական հասարանի» (էջ 1604) վոչիկ նշանակել է նաև մի անասկ տրեխ։ Անշուշտ այս իմաստը երկրորդական է, ծագելով «ուսմիկ գյուղացի» հիմնական զաղափարից (ըստ առյուծկերության զուգորդության)։ Այդ տրեխ իմաստով կա և ձևափոխված առյուծկ (Մոկս)՝ ուրչիկ (Սիփան, Ռշտունիք) — տես Ս. Ամատունի, Հայոց բառ ու սան, էջ 270:

² Նմանապես պատահական նմանություններ չունեն իմ կարծիքով նաև հետևյալ բառերը— 1) *սարա-նում* կամ շտնում բայերը, որ նշանակում են «վախենալ, խրտենալ» (այս-տեղից էլ՝ *կարխում*, *խրտում* նույնիմաստ ձևերը) և համընկնում են երբ. և ասուր. *srd*, արար. *šrd* բայաբաժաններին նույն իմաստով («վախենալ, փախչել»), որ ևս քաղում եմ «Արմ. բառ.»-ից (VI հ., էջ 152): 2) *վիսկիկ* «ճեղքել, բաժանել, մեկնել», *պառակ-ել* («պառակել, երկպառակել և այլն»), որոնք բնագծով հնդեվրոպական չեն և ըստ իս կապվում են «եմական լեզվաշխարհին» (արամ. *šrq* «կտրելով հանել», արար. *šarq* «ճեղքել, երկուսի բաժանել», երբ. *šrq* «պատել, խել» և այլն, տես «Արմ. բառ.», VI, 1206): Ի միջի այլոց այս վերջին ստուգաբանությունը տվել եմ ևս զեռ 1906 թ. իմ «Происхождение ар.-арм. слова

նաև մեր լուսավ. (зародили) բառի և սեմական (հրեական, փյունիկական և այլն) šal(a)m պատկեր, изобретение բառերի ընդհանուր ծագման մասին, թեպետ իմաստով և նշյունական մասով որոշ տարբերություն կա (հայերենում որպես փոխառություն ապասելի էր «ծաղմ, ցաղմ»)։

Դեռ Եվելինը նա կարծում եմ, որ հակապատական չպիտի համարել, երբ որոշ հայկական բառեր կապակցում են անմիջապես սումերական լեզվում եղած նման բառերի հետ, չունենալով միջնորդական (սեմական, էլամական և պարսկական...) օրինակները, որպես փոխանցող օղակներ։ Այդ տեսակետից ճիշտ պիտի համարել օրինակ Karst-ի կամ Ուզբեկյանի մոտեցումը, երբ զրանք մատնանշում էին հետևյալ ընդհանրությունները—arikgilim—արագիլ, udu=օգի (սուխար), ud=օդ, zag «սահման» ծագ (ծագիւմ), agz «հեռերի մաս» օգի «պոչ» և այլն։ Ես կառաջարկեի ավելացնել նաև մեր կապար բառը, որ մոտենում է սումերական ku. babbar (=kubabbar) «արծաթ» բառին (կար և ud. kabar «բրոնզա»), արտացոլելով երեի մետաղների հայտնադործման և անվանումների անցումը նախորդ առարկայից մյուսի վրա, ըստ զրանց որոշ ֆունկցիայի կամ հատկանշի։ Այդ սումերական kubabbar-ը հեշտությամբ կարող էր դառնալ kababar, իսկ սա էլ՝ kabbar = kapar, ինչպես հայտնի դիպում է Arlasasat > Artasat, минералогия > минералогия և այլն։ Այս կապակցությամբ արդարացի էր և Հ. Ահառյանը, երբ հայոց կաշի բառը անմիջապես համեմատում էր սումերական kuš և արաբ. qas՝ նույնիմաստ բառերի հետ. կամ թե հայոց կաշի (առյուծի, դայի, կետի, իժի և վիշապի ձաղ) բառը համեմատում էր ասոր. gūria, արաբ. jāru, երբ. gur, gor (անասունի, մանավանդ առյուծի ձաղ) բառերի հետ, զրանց սկիզբը համարելով սումերական կամ ակկադական մի բառ, որ մեղ չի հասել (տե՛ս նրա «Հայոց լեզվի պատմություն», էջ 200)։

Նմանապես ճիշտ պիտի համարել Հ. Ահառյանի ստուգաբանությունները հայոց գամաֆ բառ. հույ շոթաքնել (somaxim «չորացնել» և հայոց խորշ (խորշակ)՝ երբ. xaršj «արևելյան հեղձույիչ քամի», թեպետ սեմական այլ լեզուներում այս բառերը չեն գտնված։ Կասկած չկա, որ միջնորդ օղակներ եղել են։ Ես կհամեմատեի նաև մեր «կոծոծ» փչի անունը և երբ. kûc-ը նույն նշանակությամբ («шип, терновник», որ ն. Մառը կապակցում էր վրաց khaçvi նմանիմաստ բառի հետ)։

Ինչ վերաբերում է հայոց լեզվի մեջ մտած ակկադական (resp. սումերական) բառերի տեսակավորությունը կամ բնույթին, ապա ընդհանրապես զրանք կուլտուրային կամ տեխնիկային վերաբերող բառեր են. ինչպես—ազարակ, անօթ, դոխ, մնդդ, անագ, բերդ, թեղ, կմախք, կշիռ, կնիք, հալալ, մալուխ, մալխազ, ուրագ, տամալ, քաղաք, չար, ծալալակ, կարթ, սակարակ, քուք, թեպետ կան և սովորական դործածության բառեր—խոռ, երկայն, ըստ, կաշառ, կապուտ, կարբ(ն), կարծր, կրակ, ճահիճ, պատառել,

ameli՝ աշխատության մեջ, որ չի բերվել Արմ. բառ. և ում. իմ կարծիքով այդ և նման ակնհայտի հայ-սեմական ընդհանուր բառերը ուր հայերենը մեծ մասամբ փոխառություն է) չպիտի բառակապակցված և աննդեցիկ փոփոխությունով զուգով զարմնել նոգեփրոպական, երբ զրանք անմիջապես կապվում են մեր հին հարևան լեզուների հետ և այն էլ զրեթե չփոխված թե հնչական և թե իմաստական մասերով։

փոխ, սխուր, ցայթել, Ծառերի անուններ են—մախր, ցիրդ, իսկ կենդանի-
ների՝ ուղտ, օղի, արագիլ։

Եթե վերլուծենք հայոց այս բառերը հնչյունաբանական օրինաչա-
փությունների տեսակետից, որքան էլ բառերի հնչյունական սպեցիֆիկան
և փոխառման տարբեր ուղիներն ու պայմանները շեղումներ պատճառեն,
այնուամենայնիվ որոշ ընդհանուր օրինաչափություններ նկատվում են։
Այսպես, օրինակ, ակկադական բառերի վերջին x լաղաձայնը, որ սսպի-
րատ է եղել (=kh, մեր «ք»), հայերենում որոշ դեպքերում անդրադարձած
ենք տեսնում ձայնեղ g (=մեր «գ») բաղաձայնով, ինչպես anak-u=անագ,
alak-u «պտի»=աղագ, urragu «քարտաշ»=ուրագ։ Այս նույնը լինում է
բառամիջում, երբ հայերենում ակկ. k-ից առաջ խցկվում է «n» (ն) կամ երբ
այդ k-ից կամ t-ից (=th, θ) առաջ լինում է «r» (=ր), ինչպես են birtu=
բերդ, sirtum (sirtu)=ցիրդ, irrilu «երդում»=երդում (երդում)․, ekallu
«պալատ, բերդ»=անդդ, ankuilu=անդեղ «մահվան աստվածը»։ Բայց կա նաև
arku «երկար»=երկար, երկայն, kaštu (<*kartu)=կարթ և այլն։ Ակկադա-
կան բառավերջի երկու kk (=մեր «քք») բաղաձայնները հայերենում աալիս
են մի kh (ք)—kalakku=քաղաք, kunukku=կնիք, kakku «զենք»=քուք․,
բայց parakku=փարախ (հմա. սուժեր. duk=դոխ, դոխագ)։ Ակկադական
խուլ ասպիրատները p, t, k (=ph, th, kh) այլ դեպքերում վերածվել են հա-
յերենում կամ նույնպես խուլ ասպիրատների կամ պարզ խուլերի, ինչպես—
tl(l)u=թեղ, unutu=անոթ, situ=ցայթել, puxxu=փոխ․, kalbu=կուղբ,
kabt-u=կապուա (կողոպուտ), aptu (apat)=ապատ, tamal(u)-u=աամալ (ի),
tarasu=տարածել, kirb-u=կտրել, kasar-u=կտրծր, paṭar-u=պատտել և
այլն։ Ակկադական ձայնեղները երբեմն դառնում են հայերենում խուլեր, ինչ-
պես՝ kakkadu=զազաթն, *gir=կիր (известь), gazar (gzi)=կղզի, gisrinu=
կշիռ, gzi (արտ. jazur)=կողոն, gimaxxu (kimaxxu)=կմախք․, բայց
«rth»=հայոց «րթ» (kirb-u, kerbetu=կտրել), rd=րդ (sird-u=ցիրդ), «lh»=
հ. դր (kalb-u=կուղբ)։ Ակկ. s տալիս է հայերենում ts (ծ) կամ ths (ց),
ինչպես—xuššu=խուց, tarasū=տարածել, šasa=ցեց, šalal=ծալալակ
(ծուղակ), kašar-u=կտրծր, čirtu (čirtum)=ցիրդ, šitu=ցայթել։ Ակկ. x
(ḫ)—հայոց խ, երբեմն հ, իսկ մեկ-երկու դեպքում՝ կ (այս մասին տես էջ 32)։
Ակկ. երկու r (=rr) դառնում է հայերենում «ռ» կամ «ր», ինչպես xurru=
խոռ, agurru=ագուռ, բայց՝ urraku=ուրագ, իսկ երկու տնգամ ունենք
r=հայոց ո, paṭaru=պատտել, maxaru=մաքառել։ Ակկ. st հնչյունա-
կոմպլեքսը դարձել է հայերենում «շտ» կամ «ստ» (Istar=աշտարակ, istu=
ըստ)։ Կրկնակ բաղաձայնները պարզի են վերածվել—kakkadu—զազաթն,
gimaxxu—կմախք, kunukku=կնիք, kalakku=քաղաք, kakku=քուք, xu-
ššu=խուց, puxxu=փոխ, irrutu=երդում, urraku=ուրագ, parakku=
փարախ, agurru=ագուռ, xurru=խոռ։

Զարմի կարծել, որ այս բոլոր ակկադական բառերը ծագումով բուն
սեմական են։ Սրանցից մի մասը, թեկուզ և ոչ այնքան էլ մեծ քանակի,
կարող էր ոչ միայն հառուկ լինել աշխարհի սուրարյան-նաիրյան ժողո-
վուրդներին, որպես աեղական բառեր, ընդհանուր այդ սեմական լեզուների
բառապաշարի հետ, այլև այդտեղից անցնել սեմիտներին, ինչպես այդ ես
ենթադրում եմ օրինակ բերդ բառի նկամամբ։ Եվ այդ կողմից չէր սխալ-
վում Ն. Մառը, երբ ցանկանում էր «հարեթական» լեզուների մեջ հայտ-

նարերել այնպիսի արմատներ ու ձևեր, որոնք կարող էին կապակցվել սեմական լեզուների հետ: Իսկ ինչ վերաբերում է մեր լեզվի ազդվելուն, ապա Միջագետքի կուլտուր-քաղաքական դերը այնքան էր մեծ, որ ասիական լեզուները, որոնց թվում և ուրարտերենը, խուրրիերենը և այլն, չէին կարող չստանալ այդ հզոր կուլտուրայի ներդրումները, մասնավորապես ֆոնոլոգի և լեզվի ընդամաստում: ¹

Մեր այս փոքրիկ հետազոտությունը, օգտագործելով ցայտօղ կատարած դիտումները հայերենի մեջ եղած ասսուրաբաբելական (ակկադական) բառարմատների նկատմամբ, այդ եղած թիվը կարողացավ կրկնապատկել, եթե ոչ ավելին: Իհարկե գիտական միտքը չի կարող սրտնով ես լավարարվել և իր անելիքը սպառված համարել:

¹ Ես համոզված եմ, որ, օրինակ, հայոց «ք» (քա, քն, քեզ, քն) դերանվան բառերը զուրկ է այդ սեմական-քմյան աշխարհից, թողած դեռ վրացական նման դերանվանական մասնիկը (g-, x-)՝ Օրինակ, բաբելան «եռի համար եզակիում գործ է անում հեռեյուղ դերանվան վերջածանցը (հոդը) — ասսուրական՝ -ka, -ku, բաբելական՝ -k, -(a)k, հեռեյուղական՝ -ka, բաբելական -ka, էթիոպիական՝ -ka, իսկ քմյան լեզուներում — եղիպական-դիթիական՝ -k, բերբերական՝ -k, բիշարի լեզվում՝ -k, աֆար և սահո լեզվում՝ նախածանց՝ ku-, բիլին և խամիր լեզուներում՝ նախածանց kü-, իսկ հուլա լեզվում գործ է անում ka «քեզ» որպես անկախ բառ: Տե՛ս N. Zimmern, Vergleichende Grammatik der semitischen Sprachen, Berlin, 1898, էջեր 64, 67: